Հայաստանի՝ ԵՄ-ին միանալու ծրագրերը պահանջում են հատուկ քննարկում: ՌԴ-ն կաջակցի այն ամենին, ինչը բխում է հայ ժողովրդի շահերից: Տրամաբանական կլինի, որ ՀՀ-ն հանրաքվե անցկացնի ԵՄ-ին միանալու կամ ԵԱՏՄ-ում մնալու վերաբերյալ: Հայաստանը զգալի առավելություններ է ստանում ԵԱՏՄ-ի շրջանակում:
Երևանը պետք է հնարավորինս շուտ հստակեցնի՝ ցանկանում է անդամակցել ԵՄ-ին, թե ԵԱՏՄ-ին, և այդ դեպքում հնարավոր կլինի քաղաքակիրթ ապահարզանի գնալ: (ՌԴ նախագահ Վ. Պուտին, 09.05.26 թ.)

Չորեքշաբթի
13 մայիսի 2026թ.
№ 7 (657)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Ադրբեջանը ոչնչացրել է Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու եկեղեցին

Սուրբ Աստվածամոր Հովանու եկեղեցին, կառուցված 2000-2019 թվականներին, հանդիսանում էր Ստեփանակերտի կարևորագույն հոգևոր կենտրոններից մեկը: Այն վերականգնում էր դարավոր եկեղեցական ներկայությունն այն տարածքում, որտեղ դեռևս XIX դարի վերջից գործող եկեղեցին խորհրդային տարիներին փակվել էր և վերափոխվել աշխարհիկ շինության: Նորակառույց տաճարը դարձավ հավատքի վերածնունդի, հիշողության պահպանման և հայկական ինքնության շարունակականության կենդանի խորհրդանիշ:

Այսօր դրա ոչնչացումը հերթական դրվագն է նույն ողբերգական շղթայի, որը մեկ դար առաջ սկսվեց ցեղասպանությամբ և այսօր շարունակվում է մեր աչքի առաջ՝ ուղղված ոչ միայն քարերի, այլև ժողովրդի հիշողության, արժանապատվության և իր հայրենիքում ապրելու և վերադառնալու իրավունքի դեմ:

«Թուրանի ճանապարհի» գաղափարի ծնունդն ու իրականացման առաջին փորձերը 1914-1921 թթ.

Հարավային Կովկասի դերն ու նշանակությունը պանթյուրքիզմի տեսանկյունից. «Թուրանի ճանապարհը»

Փոքր Ասիայում ստեղծված Օսմանյան կայսրությունը դեպի Արևելք ծավալվելու և Հարավային Կովկասը նվաճելու տարբեր փորձեր է ձեռնարկել դեռևս 15-16-րդ դարերից: Այդ նախաձեռնություններն ունեցել են փոփոխական հաջողություններ, սակայն օսմանյան կողմին այդպես էլ չի հաջողվել ամրանալ Հարավային Կովկասում: Այստեղ անհրաժեշտ է նշել երկու կարևոր հանգամանք: Առաջինը. գրեթե բոլոր այս փորձերի կարևոր մարտավարական թիրախը եղել է հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածը, որի նվաճումը թույլ էր տալու հաղթահարել դեպի Կովկաս մուտքը և դուրս գալ դրանից անդին տանող ճանապարհները: Երկրորդ. օսմանյան վերնախավի կողմից Հարավային Կովկասը մշտապես դիտարկվել է ոչ թե որպես վերջնական նպատակակետ, այլ միայն միջանկյալ անհրաժեշտ օղակ, որը թույլ կտար գերակա դիրք ունենալ և շարունակել ծավալապաշտական քաղաքականության տրամաբանությունից բխող հաջորդ քայլերը հարակից գոտիներում ու շրջաններում:

Հարավային Կովկասի համար Օսմանյան կայսրության մղած պայքարի վերջին փուլը սկսվել է 19-րդ դարավերջին 20-րդ դարի սկզբին, որը համընկնում է կայսրության վերջնական թուլացման ու անկման ժամանակաշրջանի հետ: Այս շրջափուլում Կովկասը վերածվում է օսմանյան ռազմաքաղաքական վերնախավի արտաքին քաղաքական գլխավոր առաջնահերթության: Կովկասի կարգավիճակի ընկալման այսպիսի փոփոխությունը պայմանավորված էր մի քանի կարևոր հանգամանքներով: Նախ՝ ստեղծված աշխարհա-

Շարունակությունը՝ էջ 2

Արցախ Միությունը ողջունում է Եվրոպական խորհրդարանի բանաձևում Արցախի ժողովրդի իրավունքների վերաբերյալ կարևորագույն դրույթների ներառումը

Արցախ Միությունը ողջունում է ապրիլի 30-ին Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևում Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ժողովրդի իրավունքների վերաբերյալ կարևորագույն դրույթների ներառումը, որոնք առնչվում են վերադարձին, մշակութային ժառանգության պաշտպանությանը, պատասխանատվության միջոցների կիրառմանը և պատանդների ազատ արձակմանը (12-րդ և 13-րդ հոդվածներ):

Մենք առանձնացնում ենք հատկապես հետևյալ դրույթները՝

- «Վերահաստատում է իր աջակցությունը Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքներին, ներառյալ՝ նրանց ինքնության, գույքի և մշակութային ժառանգության պաշտպանությանը, ինչպես նաև համապատասխան միջազգային երաշխիքներով անվտանգ, անարգել և արժանապատիվ վերադարձի նրանց իրավունքը»:
- «Կոչ է անում պատասխանատվության ենթարկել հայկական մշակութային և կրոնական ժառանգության ոչնչացման մեղավորներին և միջազգային գնահատման առաքելություն կազմակերպել»:
- «Դատապարտում է Ադրբեջանի կողմից հայ ռազմագերիների, կալանավորների և պատանդների անարդարացի ազատազրկումը. պահանջում է նրանց անհապաղ և անվերապահ ազատում»:
- «Նկատի է առնում մինչ այժմ ձեռնարկված քայլերը և կոչ է անում հետագա վստահության ամրապնդման միջոցներ ձեռնարկել. կոչ է անում լիովին հարգել միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքները»:

Արցախ Միությունը բարձր է գնահատում Եվրոպական խորհրդարանի պատգամավորների ու խմբակցությունների հետևողական ու սկզբունքային դիրքորոշումը Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության հարցում, որն արտահայտվում է վերջին տարիներին ընդունված բանաձևերում՝ նույնիսկ կառավարությունների դիրքորոշումների կտրուկ փոփոխության պայմաններում: Եվրոպական խորհրդարանի բանաձևերը հստակ ուղենիշներ են Եվրոպական Միության և նրա անդամ երկրների գործադիր իշխանությունների համար, որոնք բացարձակապես անտեսում են Արցախի ժողովրդի իրավունքները՝ իրենց աշխարհաքաղաքական շահերի նեղ ընկալումներից ելնելով:

«Այս բանաձևը կարևոր ազդակ է մեր ժողովրդի համար, որ մենք ամբողջապես մոռացված չենք միջազգային հանրության կողմից և ունենք արժեքահեն բարեկամներ, որոնք շարունակում են աջակցությունը մեր հավաքական ու անհատական իրավունքներին: Հույս ունենք, որ մայիսի 4-5-ը Երևանում տեղի ունենալիք Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի և ԵՄ-Հայաստան 1-ին գագաթնաժողովի ժամանակ Եվրոպական Միության և անդամ պետությունների ղեկավարները հաշվի կառնեն ԵԽ վերջին բանաձևը և դրանից բխող գործողություններ ու հայտարարություններ կկատարեն»,– նշել է Արցախ Միության նախագահ Արտակ Բեգլարյանը:

Մենք շեշտադրում ենք, որ տարածաշրջանում կայուն խաղաղությունն ու ժողովրդավարական զարգացումն անհնար են, քանի դեռ չեն վերականգնվել ու պաշտպանվել Արցախի ժողովրդի իրավունքները և արմատախիլ չի արվել հայատյացության պետական քաղաքականությունը Ադրբեջանում:

2026 թ. հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը

1. ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Հարությունյան Վաղարշակ Վարնազի
Բաբայան Վահան Շոթայի
Ներկարարյան Անի Լեւոնի

2. «ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Կյուրեղյան Սպարտակ Տիգրանի
Գեւորգյան Իշխան Սամվելի
Կարապետյանց Նինա Տիգրանի

3. «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔ (կազմում՝ «ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ,«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ)
Կարապետյան Նարեկ Կարենի
Վարդեւանյան Արամ Պողոսի
Մելոյան Գոհար Գագիկի

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Սիմոնյան Գուրգեն Էդմոնի
Անտինյան Էդվարդ Արմենակի
Մկրտչյան Լուսինե Մարտիկի

5. «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Մարության Հայկ Հրաչյայի
Կարապետյան Հակոբ Մանվելի
Արամյան Նարինե Միքայելի

6. «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Թաթոյան Արման Հակոբի
Անանյան Դավիթ Սանասարի
Մատինյան Աստղիկ Համլետի

7. «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Ծառուկյան Գագիկ Կոլյայի
Թեւանյան Անդրանիկ Նորիկի
Սարգսյան Լուիզա Աշոտի

8. «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԵՎԵՌ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Կարապետյան Գեւորգ Ռոբերտի
Սաֆարյան Գեւորգ Վիտալիկի
Սախոյան Արմենուհի Լիպարիտի

9. «ՔՈՉԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԱԶԳԻ ՉԱՐԹՈՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Սարգսյան Արտակ Գոդերզինի
Հովհաննիսյան Հմայակ Կոնստանտինի
Կուջոյան Լիլիթ Սեյրանի

10. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Զուրաբյան Լեւոն Արամի
Մանուկյան Արամ Վիգենի
Զորյան Տաթեւիկ Արարատի

11. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Սարգսյան Արամ Զավենի
Ադամյան Անահիտ Հրանտի
Մխիթարյան Ռոմիկ Կառլենի

12. ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Շիրինյան Լեւոն Ղազարի
Թադեւոսյան Արգիշտ Ռաֆիկի
Սահակյան Սիլվա Սերյոժայի

13. «ԱԼՅԱՆՍ» ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Ուրիխանյան Տիգրան Խաչատուրի
Գալստյան Աշոտ Վարազդատի
Հովհաննիսյան Գոհար Լեւոնի

14. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Պետրոսյան Սուրեն Ռաֆիկի
Այվազյան Վարդան Նորիկի
Գաբրիելյան Հասմիկ Արմենի

15. «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ, ՕՐԵՆՔ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Ղուկասյան Վարդան Յուրիկի
Բաղդասարյան Լևոն Սոխակի
Ղուկասյան Աննա Վազգենի

16. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Փաշինյան Նիկոլ Վովայի
Միրզոյան Արարատ Սամվելի
Ավանեսյան Անահիտ Թորգոմի

17. «ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ», կազմում՝ «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, «ԱՌԱՋ» ԱՋԱԿԵՆՏՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Քոչարյան Ռոբերտ Սեդրակի
Սաղաթելյան Իշխան Վաչիկի
Գրիգորյան Աննա Արամի

18. «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Բաբաջանյան Արման Շամիրի
Մեհրաբյան Ռուբեն Հենրիկի
Զեյնալյան Լուսինե Ներսեսի

19. «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Մարուքյան Էդմոն Հրաչիկի
Փաշոյան Կարպիս Ռուբիկի
Ավագյան Շուշանիկ Սուրենի

«Թուրանի ճանապարհի» գաղափարի ծնունդն ու իրականացման առաջին փորձերը 1914-1921 թթ.

Սկիզբը՝ էջ 1

քաղաքական նոր պայմաններում Կովկասի կարևորությունը որպես Եվրոպան և Ասիան կապող ցամաքային տարածաշրջան էականորեն աճեց: Դրանով անցնող տրանսպորտային ուղիները վերածվեցին համաշխարհային քաղաքականության կարևորագույն թիրախների: Բացի այդ, շարունակաբար պարտություններ կրելով տարբեր ճակատներում և այլևս չտեսնելով կայսրությունը փրկելու ու նախկին հզորությունը վերականգնելու հնարավորություններ՝ օսմանյան վերնախավը բնականորեն հակվեց դեպի Արևելք (և Կովկաս): Վերջիններիս գնահատմամբ՝ այստեղ առկա էին ծավալման որոշ հնարավորություններ, ինչը պայմանավորված էր մի քանի փոխլրացնող հանգամանքներով: Նախ՝ դեպի Արևելք ծավալման պարագայում առաջնային հակառակորդը Ռուսական կայսրությունն էր, որի դեմ պայքարում օսմաններն ակնկալում էին ստանալ այլ գերտերությունների աջակցություն: Մյուս կողմից՝ օսմանյան պետությունից դեպի արևելք ընկած լայն տարածաշրջանում ապրում էին թյուրքախոս, իսլամադավան տարբեր ժողովուրդներ, որոնց օսմանյան վերնախավը դիտարկում էր որպես իր բնական ազդեցության տարածման գոտի: Ավելին, ռազմավարական ծրագրման փուլում Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող տարածքներում ապրող այս ժողովուրդներն ընկալվում էին որպես բնական դաշնակիցներ, որոնք կարող էին ապստամբություն բարձրացնել և թիկունքից հարվածել ռուսական կողմին: Արևելյան ճակատի կարևորությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ փլուզվող կայսրությունը նախահարձակ լինելով՝ փորձում էր այդպիսով ապահովագրել իրեն ռուսական հարձակումից, ինչը կարող էր վերջնական թուլացնել և կործանել կայսրությունը:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո իշխանության եկած կառավարությունը (ի դեմս «Միություն և առաջադիմություն» կուսակցության) և վերջիններիս սատարող օսմանյան վերնախավի մի զգալի հատվածը հստակ որդեգրեց պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, ու պետական մեքենան սկսեց իր ռազմավարությունը համապատասխանեցնել դրան:

1911-1913 թթ. Բալկանյան պատերազմներից հետո, երբ օսմանյան պետության «ծանրության կենտրոնը» Եվրոպայից տեղափոխվեց Ասիա, պանթյուրքիզմը դարձավ արտաքին քաղաքականության նոր ու հիմնական գաղափարական առանցքներից մեկը՝ իր համապատասխան հիմնավորմամբ ու փաթեթավորմամբ: Իր էության մեջ լինելով նաև հակառուսական և հակադրվելով պանսլավիզմի գաղափարախոսությանը՝ պանթյուրքականությունը նախատեսում էր Օսմանյան կայսրությունից արևելք ընկած տարածքներում թյուրքախոս ժողովուրդների միավորում մեկ պետության՝ Թուրանի կազմի մեջ: Ըստ պանթյուրքական տարբեր պատկերացումների՝ Թուրանը (Turan) առասպելական համաթյուրքական հայրենիքն է, որը ձգվում է Եվրասիայի ընդարձակ տարածքներում (Բալկաններից ու Փոքր Ասիայից մինչև Կենտրոնական Ասիա ու Չինաստան) և որը բնակեցված է գերազանցապես թյուրքական ժողովուրդներով:

Պանթյուրքական ռազմավարության

Շարունակությունը՝ էջ 4

Նախընտրական քարոզարշավով Սյունիք այցելող Նիկոլ Փաշինյանին. ընտրողին հաշվետվություն տալու ժամանակը

Պարոն Փաշինյան

Տեղեկացանք՝ այսօր (նախընտրական քարոզարշավով) Սյունիքում եք:

Անշուշտ, մեզ հետաքրքիր է ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից յուրաքանչյուրի (այդ թվում՝ ՔՊ-ի) նախընտրական ծրագիրը և հատկապես Սյունիքին առնչվող ծրագրային դրույթները:

Սյունեցիներիս մտահոգող հիմնախնդիրներից մի քանիսն օրեր առաջ հրապարակել ենք, և արդեն իսկ կան արձագանքներ. քաղաքական որոշ ուժեր ներկայացնում են իրենց պատկերացումները սյունիքյան մտահոգությունների վերաբերյալ:

Հույս ունենք, որ Ձեր գլխավորած կուսակցությունը ևս՝ մեզ մտահոգող խնդիրների վերաբերյալ կարտահայտի իր դիրքորոշումը:

Սակայն, ի տարբերություն ընտրություններին մասնակցող մյուս կուսակցությունների և դաշինքների, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (որպես հանրապետությունն ութ տարի ղեկավարած քաղաքական ուժ) պարտավոր է հանգամանալից հաշվետվություն տալ իր արած–դրածի, ՀՀ կառավարության սյունիքյան մի քանի՝ առավել մտահոգող հարցերի վերաբերյալ:

Ինչո՞ւ ենք հենց այս ձևաչափն ընտրել Ձեզ դիմելու համար:

Պատասխանը մեկն է՝ ուրիշ տարբերակ պարզապես չունենք:

Կառավարության նիստերից հետո լրագրողների հետ Ձեր ճեպազրույցին, որ վերջերս ավանդույթ եք դարձրել, հեռավորության պատճառով չենք կարող մասնակցել ու ՀՀ վարչապետին հարցեր ուղղել:

Սյունիք այցելելիս Ձեզ հետ հանդիպելն ու հարցեր ուղղելը նույնպես անհնար է, քանզի ամեն ինչ՝ մանրամասնորեն, ինչպես տեսնում ենք, ծրագրված է նախապես, Ձեզ մոտեցող քաղաքացիների ցանկը և նրանց կողմից հնչեցվող խոսքերը՝ նույնպես:

Ձեզ գրավոր դիմում ուղղելն էլ անիմաստ է, քանզի դրանց (փորձն է ցույց տալիս) չեք պատասխանում կամ գուցե նույնիսկ չեք էլ ընթերցում:

Ձեզ մոտ ընդունելության հերթագրվելն էլ իզուր է, ինչպես տարիների փորձն է ցույց տալիս:

Տարածքային իշխանության ներկայացուցչի և սյունեցի իշխանական պատգամավորների միջոցով ինչ–որ հարցեր Ձեզ փոխանցելը նույնպես անօգուտ է, քանզի նրանք, որպես կանոն, հազիվ իրենց անձնական խնդիրներն են (փաթեթավորված պետական շղարշով) Ձեզ հրամցնում կամ իրենց անձը մերժողների ու իրենց տկարությունը նկատողների վերաբերյալ զրպարտող տեղեկություններ հաղորդում՝ վարչապետի զորավոր ձեռքով նրանց վնասներ հասցնելու միտումով:

Եվ Դուք, ինչպես տեսնում ենք, ընդառաջ եք գնում նրանց...

Այնպես որ՝ Ձեզ դիմելու միակ ուղին այս է, թեև քիչ հավանական է, որ բարձրացվող հարցերի վերաբերյալ հաշվետվություն կամ պարզաբանում կներկայացնեք (նախորդ դեպքերում, օրինակ, չեք արձագանքել մեր հարցերից որևէ մեկին, հավանաբար պատասխան չեք ունեցել):

Այդքանով հանդերձ՝ կամենում ենք այսկերպ ճեղքել ՀՀ վարչապետի ու հազարավոր սյունեցիների միջև՝ Ձեր ու հետևորդներիդ կողմից կառուցված պատնեշը և ընտրողի իրավունքով հաշվետվություն պահանջել իշխող քաղաքական ուժի առաջնորդից, ով ուզում է վերստին ստանձնել երկրի կառավարումը:

Ստորև՝ հարցերը, որոնց վերաբերյալ հաշվետվություն կամ պարզաբանում ենք ակնկալում:

1. 2020 թ. նոյեմբերի 9 (10)-ին հայտնի եռակողմ փաստաթղթով, որով իբր վերջ դրվեց 44 օր տևած պատերազմին, «Հայտարարվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ամբողջական հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների դադար...»:

Հայտարարվեց նաև՝ «Կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում»:

Սակայն հետագայում պարզվեց, որ եռակողմ հայտարարության ընդունումից օրեր անց՝ 2020 թ. դեկտեմբերի սկզբին, Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքվել է ինչ–որ գաղտնի հուշագիր (Меморандум), որի համաձայն՝ 2020 թ. դեկտեմբերի 18-ին Սյունիքի արևելյան սահմանի մեր դիրքերը հանձնվել են Ադրբեջանին, որի համաձայն որոշվել է Գորիս–Կապան և Կապան–Ճակատեն ճանապարհների ճակատագիրը՝ դրանք հանձնելով Ադրբեջանի տիրապետությանը:

ԱԳ նախկին նախարար Արա Այվազյանը «Ազատություն» ռ/կ–ին տված հարցազրույցում ժամանակին ասել է, թե ԱԳ նախարարությունը նույնիսկ տեղյակ չի եղել՝ ինչ հուշագիր է ստորագրվել:

2020-ի պատերազմական օրերին՝ հոկտեմբերին, Դուք այցելեցիք Գորիս, հանդիպեցիք մարզի համայնքապետերի հետ և հանձնարարություն տվեցիք՝ Սյունիքի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ:

Եվ համայնքապետերը կատարեցին Ձեր հանձնարարությունը, մեծ ծախսերի գնով ինժեներական կառույցներ պատրաստեցին ու էականորեն ամրապնդեցին Սյունիքի արևելյան պաշտպանական գիծը:

Եվ հանկարծ՝ 2020 թ. դեկտեմբերյան այդ հուշագիրը... Ու Սյունիքի պաշտպանական գիծը՝ մոտ 20 կմ–ով, հետ քաշվեց...

Միգուցե ասեք՝ ինչպե՞ս են Սև լճի արևելյան հատվածը, Գլուխ Ձագեձորո լեռնագագաթը, Մեծ Իշխանասարի և Ուխտասարի հարակից տարածքները, Ներքին Հանդի մերձակայքը, Տեղ գյուղի արևելյան դաշտամասերը, Գորայքի ամառային արոտավայրերի հյուսիսային եզերքը կամ Որոտանի ակունքներին հարող տարածքները հայտնվել Ադրբեջանի տիրապետության ներքո:

3. Ձեր գլխավորած կառավարությունն ի՞նչ է արել և ի՞նչ է անում Սյունիքից բռնազավթված տարածքները հետ բերելու ուղղությամբ:

Քանիցս Դուք հայտարարել եք, թե Հայաստանի Հանրապետությունը չի պատրաստվում ռազմական ճանապարհով վերադարձնել օկուպացված տարածքները: Ասել է թե՝ կողմնակից եք խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելուն:

Դա, անշուշտ, գնահատելի է, մանավանդ որ սյունեցիներս, առավել քան որևէ մեկը կառավարությունում, իրական խաղաղություն է փափագում, բայց...

Դուք իսկապե՞ս հավատում եք, որ օկուպացված տարածքներն Ադրբեջանը վերադարձնելու է (եթե նկատի ունենանք նաև մամուլում ժամանակ առ ժամանակ տարածվող տեղեկատվությունն առ այն, որ այդ տարածքներում Ադրբեջանն ամրաշինական աշխատանքներ է կատարում):

Միգուցե ասեք՝ ինչպե՞ս են Սև լճի արևելյան հատվածը, Գլուխ Ձագեձորո լեռնագագաթը, Մեծ Իշխանասարի և Ուխտասարի հարակից տարածքները, Ներքին Հանդի մերձակայքը, Տեղ գյուղի արևելյան դաշտամասերը, Գորայքի ամառային արոտավայրերի հյուսիսային եզերքը կամ Որոտանի ակունքներին հարող տարածքները հայտնվել Ադրբեջանի տիրապետության ներքո:

> ***Ակնկալում ենք պարզաբանում այսպես կոչված «Թրամփի ուղու» կամ «Թրիփփի» շուրջ:***
> ***Նախ՝ աշխարհագրական տեսակետից կամ ֆիզիկական իմաստով ի՞նչ է իրենից ներկայացնելու այդ ուղին:***
> ***Ավելի պարզ՝ քանի՞ քառակուսի կիլոմետր է տրամադրվելու «Թրամփի ուղուն» և խոսքը ո՞ր տարածքների մասին է (ադրբեջանական և թուրքական քարտեզներում Սյունիքի մարզի ամբողջ տարածքն այլևս մատնանշվում է «Զանգեզուրի միջանցք» անվամբ):***

Իսկ եթե, ասենք, սահմանազատման–սահմանագծման արդյունքում «ապացուցվի», որ օկուպացված տարածքները «պապենական» ադրբեջանական հողեր են, ի՞նչ եք անելու:

Այդ ժամանակ դարձյա՞լ վկայակոչելու եք մեզ ոչինչ չտված Ալմա - Աթայի հռչակագիրը:

Իսկ միգուցե առերեսվե՞ք պատմությանը...

1920-ական թվականներին Հայաստանի Զանգեզուր գավառի և Ադրբեջանի Քյուրդիստան գավառի միջև սահմանների ճշգրտում է կատարվել: Ընդ որում՝ կատարվել է Անդրկենտգործկոմի և Ադրբեջանի ու Հայաստանի իշխանությունների համատեղ որոշմամբ:

Կատարված աշխատանքի արդյունքում ճշգրտվել–վավերացվել են Սիսիան–Քելբաջար, Գորիս–Լաչին, Գորիս–Կուբաթլի, Կապան–Կուբաթլի և Կապան–Զանգելան շրջանների սահմանները:

Այսինքն՝ Որոտանի ակունքներից, Մեծ Իշխանասարից ու Սև լճից մինչև Ճակատեն մեր սահմանները ճշգրտվել են մետր առ մետր:

Հաջորդ անգամ Սյունիքի շրջանների և Ադրբեջանի արևմտյան շրջանների միջև սահմանները վերաճշգրտվել են 1980-ականների 2-րդ կեսին՝ Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունների համատեղ նախաձեռնությամբ:

Եվ ուրեմն՝ եթե երկու անգամ արդեն իսկ (պետական ամենաբարձր մակարդակով) ճշգրտվել են Սյունիքի արևելյան սահմանները, եթե ԽՍՀՄ–ը փլուզվելու պահին Ադրբեջանն ու Հայաստանը միմյանց նկատմամբ (Սյունիքի ուղղությամբ) տարածքային պահանջ չեն ունեցել, ապա ո՞րն է այդ սահմանները երիցս ու վերստին ճշգրտելու իմաստն ու նպատակը:

Արդյո՞ք 1920-ականների հանձնաժողովի և 1980-ականների հանձնաժողովի աշխատանքների հիման վրա ընդունված փաստաթղթերը չեղարկվել են: Եթե այո, ապա ինչո՞ւ և ի՞նչ պատճառաբանությամբ:

4. Այսպես կոչված Թրամփի ուղու կամ (Իլհամ Ալիևի արտահայտությամբ) Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ նախնական փաստաթղթեր ստորագրելուց հետո՝ վերջերս, և՛ Միեր Գրիգորյանը, և՛ Դուք հայտարարեցիք, թե սահմանազատման–սահմանագծման աշխատանքները (հյուսիսից շարունակելու փոխարեն) նախևառաջ կատարվելու են Մեղրու տարածաշրջանում: Պատճառաբանում եք, թե «արտահերթ» սահմանազատումը կկատարվի, որպեսզի TRIPP–ի ենթակառուցվածքային զարգացմանը նպաստ բերեք:

Չգիտեմ՝ տեղյա՞կ եք, թե՞ ոչ, ինչի համար էլ ուզում եմ տեղեկացնել՝ 1922 թվականից մինչև 1929 թվականի հուլիս, Սյունիքում՝ Զանգեզուրի գավառից բացի, գոյություն է ունեցել նաև Մեղրու գավառը:

Մեղրու գավառի գոյության ողջ ընթացքում խնդրահարույց էր Ադրբեջանի Կարյագինոյի (Զաբրաիլ) գավառի հետ ունեցած սահմանը:

Տարիներ տևած քննարկումներից հետո Անդրկովկասյան Դաշնության Կենտգործկոմի նախագահությունը 1928 թ. փետրվարի 18-ի որոշմամբ՝ վիճելի համարվող տարածքները փոխանցել է Մեղրու գավառին՝ այդկերպ վերջնականապես փակելով վեճի թեման:

Դրանից հետո հայ–ադրբեջանական սահմանի Մեղրու հատվածում կատարվեցին սահմանագծման աշխատանքներ:

Հիմա ինչո՞ւ եք ուզում ճշտված–ճշգրտված այդ սահմանները վերստին ճշտել:

5. Անպայման պետք է անդրադառնաք Սյունիքի ժողովրդագրական վիճակին...

Հատկապես վերջին 15 տարում Սյունիքից մարդկանց արտագաղթ է նկատվում՝ վտանգավոր չափերի հասնող: Եթե, օրինակ, 2008-ին մարզի բնակչությունը 163 հազար էր, 2017-ին՝ 138,9 հազար, ապա հիմա...

Քաղաքական ուժերից մեկի ներկայացուցիչը վերջերս հայտարարեց, թե միայն անցած յոթ տարում Սյունիքի բնակչությունը նվազել է 21.7 հազար մարդով:

Քանի որ վիճակագրական ծառայությունից հնարավոր չէ մարզի ժողովրդագրական վիճակի մասին ստույգ պատկերացում կազմել և վերոնշյալ ասեկոսեների հավաստիությունը ճշտել, ապա կուզենայինք, որ Դուք կամ կառավարության համապատասխան օղակները (ըստ մարզի բնակավայրերի) ներկայացնեիք Սյունիքի ժողովրդագրական պատկերը վերջին 10-15 տարվա կտրվածքով՝ մինչև 2026 թ. հունվարի 1-ը:

Եվ, իհարկե, ի՞նչ է արել և ի՞նչ է անում Ձեր գլխավորած կառավարությունը Սյունիքի բնակչության արտագաղթը կանխելու, երկրամասում ժողովրդագրական վիճակը կայունացնելու համար, որը Սյունիքի լինելության թիվ 1 խնդիրն է:

6. 2022 թ. հոկտեմբերի 6-ից Դուք պարբերաբար պնդում եք, թե Արցախն Ադրբեջանի մաս է:

Նկատի ունենալով հանգամանքը, որ, Ձեր իսկ խոստովանությամբ, հետևողականորեն ծանոթանում եք հայ ժողովրդի պատմությանը՝ կարո՞ղ եք ներկայացնել պատմական–միջազգային գոնե մեկ փաստ, փաստաթուղթ կամ քարտեզ, որ Արցախը երբևէ եղել է Ադրբեջանի մաս:

Բացի պատմական հայտնի խայտառակությունը, որ սովորական առևտրի հետևանքով՝ 1921 թ. հուլիսի 4-ին՝ Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության՝ թուրքերի կողմից վարձակալված Կովկասյան բյուրոյի որոշմամբ Արցախը (ինքնավար մարզի կարգավիճակով) հայտնվեց Խորհրդային Ադրբեջանի կազմում:

7. 2020 թվականից հետո պարբերաբար Սյունիք այցելող միջազգային կազմակերպությունների, ինչպես և եվրոպական երկրների ներկայացուցիչները տեղացիներիս խոստացել են ներդրումներ...

Տեղեկատվության բաց աղբյուրներում հնարավոր չեղավ ճշտել այդ խոստումների ամբողջական պատկերը՝ գումարային արտահայտությամբ, թեև որոշ աղբյուրների պնդմամբ՝ խոսքը մի քանի հարյուր մլն դոլարի ներդրումային ծրագրերի մասին է եղել:

Կուզենայինք կառավարության համապատասխան մարմինների օգնությամբ իմանալ՝ անցած հինգ տարում ո՞ր միջազգային կազմակերպությունները և ո՞ր երկրներն են Սյունիքում ներդրումներ կատարելու խոստումներ տվել կամ պատրաստակամություն հայտնել և դրանցից (կոնկրետ) ո՞ր մասն է կյանքի կոչվել ու մարզի ո՞ր բնակավայրում:

8. Ակնկալում ենք պարզաբանում այսպես կոչված «Թրամփի ուղու» կամ «Թրիփ-

Շարունակությունը՝ էջ 7

«Թուրանի ճանապարհի» գաղափարի ծնունդն ու իրականացման առաջին փորձերը 1914-1921 թթ.

Սկիզբը՝ էջ 2

առաջնային թիրախը Հարավային Կովկասն էր՝ որպես կայսրությանն ամենամոտ գտնվող թյուրքախոս-իսլամադավան բնակչության որոշակի շերտ ունեցող տարածք, որից հետո այն պետք է ծավալվեր դեպի անդրկասպյան գոտի՝ Կենտրոնական Ասիա: Հարավային Կովկասի նվաճման և ապա անդին տարածվելու այս քաղաքականության գործադրման շրջանում առաջ եկավ անհրաժեշտություն ուժեղացնելու Կովկասում (հատկապես դրա արևելյան՝ մերձկասպյան հատվածներում) բնակվող իսլամադավան թյուրքախոսներին՝ վերջիններիս աջակցելով պետական միավորի ձևավորման հարցում, որը պետք է դառնար օսմանյան գլխավոր հենակետը և որի հետ անհրաժեշտ էր ձևավորել ուղիղ ցամաքային կապ: Սա իրագործելու լավագույն տարբերակը ցամաքային ընդհանուր սահմանի ձևավորումն էր, ինչն էլ հնարավոր էր անել Հարավային Կովկասի ամբողջական կամ մասնակի նվաճման պարագայում: Այսպիսով, օսմանյան ռազմաքաղաքական ծրագրման այս փուլում կովկասյան թյուրքախոսների՝ թաթարների (ներկայիս ադրբեջանցիներ) հետ ցամաքային ճանապարհով կապվելու գաղափարը դառնում է գերակա՝ ստանալով նաև կոնկրետ անվանում՝ «Թուրանի ճանապարհ»:

Առաջին աշխարհամարտի մեկնարկը որպես պանթյուրքիզմի գործադրման հնարավորություն

Առաջին աշխարհամարտի նախընթաց շրջանում Օսմանյան կայսրությունում պանթյուրքականության քարոզը ծավալվում էր ամբողջ թափով: Այսպես օրինակ՝ ժամանակի օսմանյան խորհրդարանի նախագահ Հալիլ բեյն իր ճառերից մեկում օսմանյան հանրության տարբեր շերտերից պահանջում էր իրենց մտավոր ողջ ազդեցությամբ արթնացնել **«ապագա սերունդների մեջ այն գաղափարը, որ սահմանի այն կողմում մնացել են մեր եղբայրները, որոնք փրկության կարիք ունեն, մնացել են մեր հողի առանձին կտորներ, որոնք ազատություն են պահանջում»:** Իսկ պատերազմի մեկնարկից հետո ծավալապաշտական այս քարոզն էլ ավելի կոնկրետացավ: Երիտթուրքական ղեկավարությունը նշում էր, որ **«ռազմական նվաճումների միջոցով նրանք կհասնեն Կովկասի, Միջին Ասիայի, Պովոլժիեի, Ղրիմի տարածքների միացմանը Օսմանյան կայսրությանը, որոնք բնակեցված են իսլամ դավանող ժողովուրդներով և, այդպիսով, կվերստեղծեն Թուրանի վաղեմի պետությունը»:** Պանթյուրքական ռազմավարության եռանդուն կենսագործողներից գեներալ, իսկ հետո քաղաքական գործունեություն ծավալած, Քյազըմ Քարաբեքիրն իր հուշերում նշում է. **«Իմ պաշտոնական դիմումներին (Ստամբուլից) պատասխանում էին, որ հայրենիքի ապագայի համար ծայրահեղորեն անհրաժեշտ է, որպեսզի Թուրքիային միացվի Կովկասյան Ադրբեջանը՝ Նախիջևանի հետ միասին»:** Օսմանյան պետության կովկասյան արշավանքի մեկ այլ մասնակից գնդապետ Բերքուբն իր հուշերում նշում է, որ երիտթուրքերի նվիրական իղձն էր **«գրավել Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասն ու Ղրիմը»:**

Հարավային Կովկասում քաղաքական այս ծրագրի իրականացման նախապատրաստական աշխատանքները պատերազմին նախընթաց փուլում ունեին երկու կարևոր բաղադրիչ: Առաջին՝ անհրաժեշտ էր Կովկասում Օսմանյան և Ռուսական կայսրությունների սահմանագծի երկայնքով ռազմավարական դիրքեր զբաղեցնել՝ պատերազմի դեպքում դեպի Կովկասի խորքը ներթափանցելու համար: Պատերազմի հենց սկզբից օսմանյան հրամանատարությունը նախատեսել էր Կովկաս ներխուժել ոչ միայն հիմնական՝ Սարիղամիշ–Կարս ուղղությամբ, այլև Իրանական Ատրպատականի կողմից, որի հյուսիսային սահմանն Արաքսի հովիտն էր և Նախիջևան-Սյունիք գոտին:

Ռազմավարական պլանի համաձայն՝ օսմանյան զորքերը, պատերազմական գործողությունները սկսելուն պես, պետք է գրավեին Ուրմիայի գավառը և այնտեղ ռազմական հենակետեր ստեղծեին՝ հետագա հարձակողական գործողությունների համար՝ Խոյ-Ջուլֆա-Բաքու և Սուլդուզ-Սոուջ-բուլաղ ուղղություններով: Հենց այս ուղղությամբ էին օսմանյան զորքերը 1900-1910-ականներին տարբեր ռազմական դիրքափոխություններ ու սահմանային դիվերսիաներ կատարում:

Երկրորդ՝ Օսմանյան կայսրությունը Կասպից ծովի արևմտյան հատվածում ապրող թյուրքախոս իսլամադավան ժողովուրդների շրջանում իրականացնում էր նաև համապատասխան քարոզչական գործունեություն՝ փորձելով տեղի բնակչությանը կողմնորոշել դեպի Ստամբուլ՝ այդպիսով հող նախապատրաստելով այդ տարածքների նվաճման և ինտեգրման գործընթացի մեկնարկի համար: Ըստ ռազմավարական ծրագրի՝ պանթյուրքական քարոզի արդյունքում օսմանյան զորքերի առաջխաղացման ընթացքում պետք է տարածաշրջանի իսլամադավան ժողովուրդների ապստամբություններ կազմակերպվեին:

Առաջին համաշխարհային պատերազմը մեկնարկեց 1914 թվականի ամռանը, իսկ Կովկասյան ճակատ հասավ միայն նույն տարվա աշնան երկրորդ կեսին: Օսմանյան կայսրության համար այն հնարավորություն էր փրկելու պետությունը փլուզումից և պահպանելու իր տեղը ձևավորվող աշխարհակարգում՝ շնորհիվ նոր տարածքային նվաճումների: Այդ օրերին երիտթուրքական կառավարության՝ իր կուսակցական մասնաճյուղերին ուղղված հանրային կոչում ասված էր. **«Չմոռանանք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցության նպատակը մեզ սոսկ վերահաս, սպառնացող կորուստից փրկվելը չէ: Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալը... առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները»:**

Կայսրության «բնական սահմանները», ըստ օսմանյան վերնախավի, գտնվում էին Կովկասում և դրան հարակից հյուսիսային Իրանում: Կարևոր է փաստել նաև այն հանգամանքը, որ հենց այդ ուղղությամբ էր կենտրոնացած օսմանյան ամենամեծ զորամիավորումը՝ շուրջ 300 հազար զինվոր (օսմանյան 3-րդ բանակը): Կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշան այդ ժամանակ հետևյալ կերպ էր հիմնավորում Կովկասի վրա ծրագրված հարձակումը.

«Գերմանիան համաձայն է, որ Եգիպտոսը, Կովկասը վերագրավենք և նույնիսկ Պարսկաստանն էլ գրավենք, և ստեղծված է հնարավորություն, որ այդ երկու կողմերը մի զինվորական պտույտով մտնենք: Այս կերպով, տարակույս չկա, որ մենք պիտի կարողանանք Թուրանի ճամփան բացել և ապահովել Թուրք միությունը»: Մեկ այլ բարձրաստիճան օսմանյան գործիչ Բեհաէդդին Շաքիրը, համաձայնելով Էնվերի հետ, նշում էր. **«Թուրքիայի հաղթանակի ճանապարհը Էնվերի ցույց տվածն է. նախընտրելի է հանդես գալ Գերմանիայի հետ միասին: Այս ճամփան փրկության և Թուրանի ճամփան է»:**

Պատերազմի մեկնարկից հետո ռազմական նախարար Էնվեր փաշայի գլխավորությամբ օսմանյան բանակն անցավ հարձակման՝ նվաճելու թուրքական «Իրիդենտան» (բաղձալի տարածքը): Պանթյուրքական նպատակին էր ծառայում օսմանյան բանակի գլխավոր շտաբի կողմից մշակված պատերազմը վարելու ստրատեգիական պլանը, որի համաձայն գլխավոր ուժերը պետք է ռուսական զորքերին հարված հասցնեին այն հաշվարկով, որ Անդրկովկասն արագ կերպով գրավվեր և, դրանով իսկ, ապահովվեր թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը մուսուլմաններով բնակեցված Ռուսաստանի մյուս շրջանները, ինչպես նաև նրան հարևան երկրները:

Չնայած սկզբնական շրջանի որոշ հաջողություններին, օսմանյան բանակը ընդհանուր առմամբ տապալեց արշավանքը դեպի Կովկաս՝ կրելով մեծաթիվ մարդկային ու տարածքային կորուստներ: 1915 թ. սկսած՝ ռուսական ուժերն անցան հակահարձակման և հաջորդ ամիսներին գրանցեցին բազմաթիվ հաջողություններ: Մասնավորապես՝ 1917 թ. սկզբի դրությամբ ռուսական բանակն Օսմանյան կայսրությունից նվաճել էր հսկայական տարածքներ Արևմտյան Հայաստանում՝ հասնելով մինչև Տրապիզոն-Բիթլիս գիծը: Փաստացի մինչև 1917 թ. Հարավային Կովկասի հանդեպ Օսմանյան կայսրության հետապնդած նպատակները և թյուրքախոս մուսուլմանների հետ միավորվելու ծրագիրը մնացին չիրականացված:

1918 թ. Կովկասյան արշավանքը և առաջին «միջանցքները»

Օսմանյան պետությունը Կովկասի հանդեպ իր ծավալապաշտական քաղաքականությունն իրականացնելու հերթական հնարավորությունը ստացավ 1917 թ.: Ռուսական կայսրությունում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները լիովին փոխեցին իրավիճակը ռազմաճակատում: Նախ 1917 թ. փետրվարին տապալվեց կայսերական միապետական համակարգը, ապա նույն տարվա հոկտեմբերին իշխանությունն անցավ բոլշևիկներին, սակայն երկրում կայունություն դեռևս չհաստատվեց: Բոլշևիկյան իշխանությունը, որը փաստացի տիրապետում էր երկրի կառավարման համակարգի մեծ մասին, ուներ լիովին այլ գաղափարական կողմնորոշում, որն ազդեց Ռուսաստանի ընդհանուր արտաքին քաղաքական գերակայությունների և ուղենիշների վրա: Այդ փոփոխության գլխավոր հետևանքներից մեկը Ռուսաստանի փաստացի հետքաշումն էր Հարավային Կովկասից: Օսմանյան կայսրության կառավարող շրջանակները որոշեցին օգտվել կովկասյան ռազմաճակատում և ամբողջ Հարավային Կովկասում ստեղծված իրադրությունից՝ 1914-1915 թթ. ձմռանը ձախողված արշավանքը վերսկսելու համար: Նպատակը շարունակում էր մնալ նույնը. գրավել ողջ Կովկասը, Իրանը և Կենտրոնական Ասիան:

Օսմանյան լայնածավալ հարձակումը սկսվեց 1918 թ. փետրվարին և որպես նախորդիվ կնքված զինադադարների խախտման կեղծ հիմնավորում նշվում էր «Կովկասի մուսուլմանների նկատմամբ հայերի գործադրած բռնությունները»: Ապրիլի վերջին օսմանյան բանակը գրավեց Կովկասի հյուսիս-արևմտյան դարպասը համարվող Կարսի բերդը, որից հետո օսմանյան քաղաքական վերնախավի ծրագրերում հստակեց վեց հաջորդ թիրախը՝ Բաքվի նվաճում, և դրանով «ռուսական և պարսկական Ադրբեջանների» միացում Օսմանյան կայսրությանը: Ակնհայտ էր, որ Կովկասը վերածելով ռազմական հենակետի, շարունակվելու էր օսմանյան ազդեցության ծավալումը դեպի թյուրքախոս այլ գոտիներ: Բաքվի արշավանքի մասին Ստամբուլում գերմանական դեսպան Բերնսդորֆը նշել էր, որ **«Թուրքիան ձգտում է Բաքուն գրավել իր, և ոչ թե Ադրբեջանի համար, որի մասին նա հայտարարել է մուսավաթական կառավարության ղեկավարներին: Բաքվի հետ մեկտեղ նա ձգտում է գրավել ողջ Ադրբեջանը: Այդ դեպքում Թուրքիան կտարածվի մինչև Վլադիկավկազ»:**

Այս նույն շրջանում խնդիր էր դրված լիարժեք չեզոքացնել տարածաշրջանում հայկական քաղաքական գործոնը, որը, չնայած հայերի հանդեպ իրականացված ցեղասպանությանը, շարունակում էր էական դեր խաղալ տարածաշրջանում և, ըստ թուրք ստրատեգների, խոչընդոտել Օսմանյան կայսրություն-Ադրբեջան ցամաքային կապի ապահովմանը, իսկ ավելի լայն առումով՝ Օսմանյան կայսրության դեպի արևելք կայուն ծավալմանը: Պատմաբան Ա. Թոյնբին նշում է, որ այս շրջանում օսմանյան վերնախավի **«ծրագիրը նախատեսում էր ազատվել բոլոր ոչ թյուրքախոս ժողովուրդներից, որոնք բաժանում էին Անատոլիայի թուրքերին Բաքվի և Ադրբեջանի (Արաքսից հարավ ընկած իրանական Ատրպատականի) թյուրքերից»:** Ավելի ուշ՝ 1918 թ. գարնանը, Բաթումի բանակցությունների ժամանակ Բեհաէդդին Շաքիրը հայ պատվիրակ Ալեքսանդր Խատիսյանին ասել էր. **«Հայերը... կանգնած են մեր համաիսլամական և համաթուրքական սրբազան իդեալների իրականացման ճանապարհին, և մենք անխուսափելիորեն կբախվենք նրանց հետ»:** 1918 թ. գարնանը հայ-թուրքական բանակցությունների ժամանակ օսմանյան զորահրամանատար Վեհիբ փաշան, քարտեզի վրա նկարագրելով թուրքական նպատակները, դիմում է հայկական պատվիրակությանը հետևյալ բացատրությամբ. **«Դուք տեսնում եք, որ ճակատագիրը քաշում է Թուրքիային արևմուտքից արևելք: Մենք հեռացանք Բալկաններից, հեռանում ենք նաև Աֆրիկայից, բայց մենք պետք է տարածվենք դեպի արևելք: Այնտեղ են մեր արյունը, մեր կրոնը ու լեզուն: Եվ սա տարերային ձգողություն ունի. մեր եղբայրները Բաքվում, Դաղստանում, Թուրքիստանում և Ադրբեջանում են: Մենք պետք է ճամփա ունենանք դեպի այնտեղ: Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճանապարհին: Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք արգելք եք դառնում մեզ իջնելու Կուրի հովիտը և գնալու Բաքու: Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճամփա տաք: Ահա թե որտեղ է մեր հիմնական վեճը: Մեզ պետք են երկու լայն ճամփաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներին առաջ շարժվելու և պաշտպանվելու: Մի ճամփան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է, որ տանում է դեպի Գանձակ, մյուսը Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով գնում է Կուրի հովիտ: Դուք կարող եք մնալ դրանց մեջտեղում, այսինքն՝ Նոր Բայազետի և Էջմիածնի շուրջ»:** Սրանից մի քանի ամիս անց՝ 1918 թ. հունիս-հուլիսին Կոստանդնուպոլսում գտնվող նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պատվիրակությանն իրավիճակի նմանատիպ բացատրություն էր տվել նաև հասարակական, քաղաքական հայտնի գործիչ Հուսեյն բեյը: Ըստ Ա. Խատիսյանի հուշերի՝ վերջինս նշել էր, որ **«մեզ (օսմաններին – հեղ.) պետք են կենդանի ուժեր, և հայերը պետք չէ, որ մեր ճամփան փակեն դեպի մեր եղբայրները»:** Եվ ցույց տվեց երկու ճանապարհներ, որոնք տանում էին դեպի այդ եղբայրները. առաջին՝ Զանգեզուր-Ղարաբաղ ճամփան, և երկրորդ՝ Ախալքալաք-Բորչալու գիծը: **«Սրանցից մեկն ու մեկը,– եզրակացրեց նա,- պետք է բաց մնա մեզ համար».** այսպես է վկայակոչում վերոնշյալ զրույցը Խատիսյանը: Այս նույն տրամաբանությամբ 1918 թ. օգոստոսին Երևանում կայացած բանակցությունների ժամանակ Կովկասում օսմանյան բանակի («Կովկասի իսլամական բանակի») հրամանատար Հալիլ փաշան նշում էր, որ **«մենք ցանկանում ենք վերականգնել կապը մեր հին հայրենիքի՝ Թուրանի հետ և դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքներն իրար միացնող ճանապարհներն ուրիշների տիրապետության տակ չլինեն»:**

Վերոնշյալ նկարագրությունից պարզ է դառնում, որ Հարավային Կովկասում իր քաղաքականության իրացման համար օսմանյան կողմը դիտարկում էր երկու հիմնական ճանապարհ, որոնցից մեկն անցնում էր հյուսիսային հատվածով՝ Կարս-Գանձակ-Բաքու ուղղությամբ, իսկ երկրորդը՝ տարածաշրջանի հարավային մասով՝ Իգդիր-Նախիջևան- Սյունիք-Արցախ-Բաքու գծով: Այս փուլում օսմանյան բանակի արշավանքի գլխավոր թիրը նպատակաուղղված էր դեպի Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա-Դիլիջան-Աղստաֆա-Բաքու գիծը: 1918 թ. սեպտեմբերին օսմանյան գեներալ Նուրի փաշայի գլխավորած բանակը գրավեց Բաքու քաղաքը, որով Հարավային Կովկասի արևելյան՝ մերձկասպյան ու Կուր-Արաքսյան դաշտավայրային հատվածում փաստացի ստեղծեց թյուրքական պետական միավոր՝ Ադրբեջանի Հանրապետություն անվամբ: Տարածքը չհայտարարվեց Օսմանյան կայսրության մաս՝ ելնելով աշխարհաքաղաքական մտայնություններից, սակայն այն փաստացի կառավարվում էր օսմանյան ռազմական հրամանատարության կողմից, իսկ «Մուսավաթ» կուսակցության խամաճիկային կառավարությունն անկարող էր միայնակ պահպանել պետականությունը: Վերահսկելի պետական միավորի ստեղծումը, սակայն, հարավկովկասյան ծավալապաշտական ծրագրի միայն առաջին քայլն էր:

Դեպի Բաքու արշավանքին զուգահեռ օսմանյան բանակները 1918 թ. գարնան ընթացքում հաջողություններ էին գրանցել Հարավային Կովկասի այլ հատվածներում ևս: Մասնավորապես, արդեն 1918 թ. հունիսին Հայաստանի նորանկախ Հանրապետության հետ կնքված Բաթու-

Կմի պայմանագրով հաստատվել էր, որ Օսմանյան կայսրությանն են անցնում Հայաստանի զգալի տարածքները, որոնք այդ պահի դրությամբ արդեն գրավված էին թուրքական բանակների կողմից: Ըստ այդ պայմանագրի՝ Օսմանյան կայսրության վերահսկողությանը տրվեցին Երևանի նահանգի Սուրմալուի ողջ գավառը, Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառների մի հատվածը: Փաստացի, ռազմական ուժով օսմանյան կողմը կարողացել էր տիրել դեպի Կովկասի խորքը գնացող երկրորդ ուղու հիմնական մասին (Նախիջևանում), որն անցնում էր Արաքսի հովտով՝ Նախիջևան-Սյունիք-Արցախ գծով: Այսպիսով, 1918 թ. ամռանը դեպի Բաքու տանող հարավային ճանապարհի հիմնական խոչընդոտը մնում էին տակավին դեռ չգրավված Սյունիքը (Զանգեզուր) և Արցախը: Միանգամայն օրինաչափորեն, Բաքուն նվաճելուց հետո հաջորդ թիրախը դարձան հենց այս երկու շրջանները, որոնց գրավումով հարավային Կովկասում կձևավորվեր լիարժեք օսմանյան գոտի:

Արդեն այս ժամանակ ակնհայտ է դառնում վերոնշյալ հարավային ճանապարհի կարևորությունն օսմանյան կողմի համար: Այն ոչ միայն աշխարհագրորեն ավելի կարճ էր և կլիմայական տեսանկյունից ավելի բարենպաստ, այլև միաժամանակ հանդիսանում էր դեպի պանթյուրքական հաջորդ նպատակակետ հանդիսացող իրանական Ատրպատական մուտքի ուղին ևս: Ուստի օսմանյան և թաթարական ուժերը 1918 թ. սկսած՝ հետևողական ջանքեր են գործադրում այս ուղղությամբ ևս թյուրքական առանցքի ստեղծման համար: Այս մասին է վկայում Հալիլ փաշայի և Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից պետական գործիչ Արամ Մանուկյանի միջև 1918 թ. ամռանը տեղի ունեցած բանակցության էությունը, որը վկայակոչում է Ռուբեն Տեր-Մինասյանը.

«Արամը, իր նախկին ընկեր՝ հաղթական Խալիլ փաշայից, ով եկել էր Երևան, պահանջում էր սահմանների ընդարձակում և ապրելու հնարավորություն: Խալիլ փաշան սկզբունքորեն չէր մերժում Հայաստանի հողերի ընդարձակման պահանջը: Նա կանխավ առաջարկում էր, որ հայերը դատարկեն Զանգեզուրի Մեղրի գավառակը, որպեսզի իրենք անմիջապես կապվեն Բաքվի հետ: Դրա փոխարեն պատրաստ էր Ադրբեջանի հաշվին ընդարձակել Հայաստանի սահմանները դեպի Ջևանշիր ու Վարանդա»:

Բնական է, որ Մեղրիի գավառակը ստանալով և Ադրբեջանի հետ ուղիղ ու անխոչընդոտ ցամաքային կապ ապահովելուց հետո Հայաստանը շարունակելու էր օղակվել ու ճնշվել, և արված տարածքային զիջումները, որոնք առաջարկում էր Հալիլը, որևէ կերպ չէին խոչընդոտելու այդ սպառնալից գործընթացին: Ավելորդ չէ նշել, որ զրույցում քննարկված տարբերակը կյանքի չի կոչվել:

1918 թ. ընթացքում՝ գարնան-ամռան ամիսներին, հանդիպելով ինչպես տեղական (հայկական) ուժերի, այնպես էլ աշխարհաքաղաքական կենտրոնների (մասնավորապես բոլշևիկ որոշ գործիչների ու Գերմանիայի) դիմադրությանը և չկարողանալով ամբողջությամբ գրավել հարավային Կովկասը, Օսմանյան կայսրությունը նախաձեռնեց նոր մարտավարություն. վերահսկողություն հաստատել բոլոր կարևորագույն ճանապարհային ենթակառուցվածքների (և առաջին հերթին՝ երկաթուղու) վրա և ստանալ անխոչընդոտ կապ Կովկասի արևելքում գտնվող թուրքական նորաստեղծ հենակետի՝ Ադրբեջանի Հանրապետության հետ: Պետք է նշել, որ նպատակների այսպիսի «սահմանափակումը» ժամանակավոր մտադրություն էր, որի արդյունքում պետք է ոչ կենսունակ վիճակում թողնվեր հայկական պետությունը և վերջնարդյունքում հանգեցներ Կովկասի լիարժեք նվաճմանը: Այս մասին է վկայում, օրինակ, Վեհիբ փաշայի այն դիտարկումը, որ «մենք (օսմանները - հեղ.) հայերին մատների վրա կխաղացնենք այնքան ժամանակ, քանի դեռ մեզ զինվորներ են հարկավոր ճակատի համար, իսկ հետո քրդերի ու թաթարների օգնությամբ նրանց կստիպենք խեղդվել այն տոպրակում, որի մեջ նրանք նստած են»: Օսմանյան վերնախավի մոտ նման մտադրության առկայության մասին է նշում այդ ժամանակ Հայաստանի Հանրապետության արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող Ալ. Խատիսյանը. **«Մեր նպատակն էր ցույց տալ մեր անվիճելի իրավունքներն Ախալքալաքի, Լոռիի, Զանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի վրա, որոնց վրա հավակնություններ ունեին մեր հարևանները: Թուրքերը շատ լավ ծանոթ էին մեր ծրագրերին և ձգտումներին, բայց չէին ուզում, որ գոյություն ունենա կենսունակ Հայաստան: Նրանք դեմ էին, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը կցվեն Հայաստանին, որովհետև կուզեին բաց պահել իրենց ճամփան դեպի Բաքու»:** Այս նպատակով օսմանյան պետությունը ձեռնամուխ եղավ ճանապարհային միջանցքների ստեղծման գաղափարին: Դրանց իրականացման առաջին փուլն անմիջապես հաջորդեց Բաթումի համաձայնագրի ստորագրմանը: Այդ համաձայնագրից զատ, օսմանյան կողմը ՀՀ կառավարության հետ բանակցություններ սկսեց Ալեքսանդրապոլում՝ Հայաստանի տարածքով «հյուսիսային միջանցք»՝ այն է դեպի Կովկասի խորքը տարանցիկ ուղի ձևավորելու համար: Արդյունքում Օսմանյան կայսրության ու ՀՀ միջև ստորագրվեցին ևս երկու լրացուցիչ պայմանագրեր, որոնք կցվեցին Բաթումի համաձայնագրին: Այս հավելվածներով թուրքական զորքերն իրավունք էին ստանում անարգել անցնելու Հայաստանի տարածքով, օգտվելու Ղարաքիլիսա-Ղազախ խճուղուց՝ դեպի Կովկասի արևելք ռազմամթերք տեղափոխելու համար: Բացի այդ, հայկական կողմը համաձայնվում էր, որ **«օսմանյան բանակը կատարի ամեն տեսակի ռազմական փոխադրումներ՝ տրանզիտով (զորքերի, զինվորների, հանդերձանքի, ռազմական նյութեղենի, ամունիցիայի, պարենի և այլ փոխադրումներ)»:**

Վերոնշյալ համաձայնագրերում հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես երկաթուղային տարանցիկ ճանապարհների հարցին: Այսպես, օսմանյան կողմը պարտադրել էր, որ, բացի տարանցիկ անխոչընդոտ փոխադրումներից, կարևորագույն կայարաններին կցվեն օսմանյան սպաներ՝ իրենց օգնականներով, որպեսզի վերջիններս ապահովեն թուրքական զորքերի հանգիստ անցումը: Ըստ համաձայնագրի, ՀՀ կառավարությունը պարտավորվում էր **«ցրել ամեն մի ուժ, որ նպատակ կունենա խանգարել հիշյալ փոխադրումներին: Եթե նա ինքը ի վիճակի չլինի այդ անելու, ապա օսմանյան զորքերը կմիջամտեն այդ խոչընդոտների վերացման համար»:** Այս դրույթները տարածվում էին նաև այլ ճանապարհներով կատարվող փոխադրումների վրա: Փաստացի, Օսմանյան կայսրությունը ոչ միայն լիարժեք օգտվելու էր հայկական ճանապարհային ենթակառուցվածքից դեպի Ադրբեջան անցնելու համար, այլև դրանց վրա տարածելու էր իր իրավասությունը՝ այդպիսով վերջիններիս հաղորդելով «արտատարածքային» (այսօրվա իմաստով՝ միջանցքային) բնույթ: Իր հերթին Ադրբեջանը ևս ջանքեր էր գործադրում Ղարաբաղ-Զանգեզուր-Շարուր-Նախիջևան-Մակու գծով Թուրքիայի հետ անմիջական կապ հաստատելու համար:

Նշված կարգավորումները նախատեսված էին Հայաստանի չգրավված հատվածի համար, որը փաստացի շարունակում էր խոչընդոտ հանդիսանալ օսմանյան նվաճումների համար և գտնվել վերջիններիս թիրախում: Սակայն օսմանյան բանակների արշավի հաջորդ փուլերը տեղի չունեցան, քանի որ այդ նույն ժամանակաշրջանում վերջինս պարտություն կրեց մնացյալ ճակատներում և 1918 թ. հոկտեմբերի վերջին կապիտուլացվեց: Հարավային Կովկասի լիակատար նվաճումն օսմանյան պետության կողմից ևս մեկ անգամ ամբողջությամբ չիրականացավ կամ չհասավ ամբողջական վերջնարդյունքին, քանի որ, ըստ Մուդրոսի զինադադարի՝ Օսմանյան կայսրությունը պարտավոր էր հետ քաշել իր զորքերը բոլոր գրավված տարածքներից:

Թուրքիա-Ադրբեջան ընդհանուր սահմանի խնդիրը քեմալականների ռազմաքաղաքական ծրագրում

Հարավային Կովկասի թուրքական նվաճման փորձի հաջորդ շրջափուլը մեկնարկում է 1919-1920 թթ., երբ օսմանյան բանակի սպաներից և քաղաքական նախկին վերնախավի մի մասից ձևավորված նոր ուժը՝ գեներալ Մուսթաֆա Քեմալի առաջնորդությամբ սկսում է իր ծավալապաշտական քաղաքականության իրականացումը, որի գլխավոր թիրախներից մեկը դարձյալ Հարավային Կովկասն էր: Նշված ուղղությամբ քեմալական ուժերի համար առաջնային նշանակություն ուներ նախ հնարավորինս նոր տարածքներ նվաճումը և Ադրբեջանի հետ ընդհանուր սահմանի ապահովումը: Այսպես, արդեն 1919 թ. դեկտեմբերին քեմալականները կապ են հաստատում Ադրբեջանում գտնվող Հալիլ փաշայի հետ, որպեսզի վերջինս ապահովի Փոքր Ասիան Ադրբեջանին միավորող և Նախիջևանն ու Զանգեզուրը ներառող «ռազմավարական միջանցք»:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ 1920 թ. ապրիլի վերջից Ադրբեջանում հաստատվեց խորհրդային իշխանություն, այն շարունակում էր մշտական կապի մեջ լինել քեմալականների հետ, և կողմերն ունեին համագործակցության լայն շրջանակ: Բոլշևիկների կողմից Ադրբեջանի նվաճման վտանգը կամ անխուսափելիությունը հասկանալով՝ քեմալականները որդեգրեցին պրագմատիկ քաղաքականություն և նախընտրեցին, որ Ադրբեջանը որպես առանձին միավոր մտնի ձևավորվող խորհրդային պետության կազմի մեջ՝ այդպիսով երաշխավորելով քաղաքական այս ծրագրի երկարակեցությունը: Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները տարածքային և ազգային հարցերում շարունակում էին նախորդ՝ մուսավաթական կառավարության մոտեցումները միայն այն տարբերությամբ, որ այս անգամ ծավալապաշտական նպատակներին հասնելու ճանապարհին, բացի հովանավոր՝ թուրքական կողմից, համագործակցում էին նաև բոլշևիկյան Ռուսաստանի հետ, որն ուներ իր շահերն ու մոտեցումները տարածաշրջանում: Ավելորդ չէ նշել, որ ադրբեջանցի բոլշևիկների և քեմալականների միջև ձևավորված գործակցությունը մեծապես օգտակար է լինում քեմալականների ու Ռուսաստանի բոլշևիկների բանակցություններում բազմաթիվ խնդիրներ ի օգուտ թուրքական կողմի լուծելու հարցում:

Կովկասյան ուղղությամբ վերոնշյալ երկու հիմնական նպատակներին հասնելու համար քեմալականներին անխուսափելիորեն անհրաժեշտ էր թուլացնել, իսկ հնարավորության դեպքում չեզոքացնել հայկական պետությունը՝ Հայաստանի Հանրապետությունը, որը զբաղեցնում էր թուրքական թիրախ հանդիսացող ռազմավարական տարածքները: Ուստի 1920 թ. ողջ ընթացքում քեմալականները մի կողմից նախապատրաստվում էին Հայաստանի վրա ռազմական հարձակման, իսկ մյուս կողմից տարածաշրջանի դերակատարների (առաջին հերթին՝ բոլշևիկյան Ռուսաստանի) հետ դիվանագիտական ակտիվ աշխատանք էին տանում հակահայկական գործողություններն առավել դյուրացնելու համար:

Ռազմական ու դիվանագիտական նախապատրաստական աշխատանքներ իրականացնելուց և իրավիճակն առավել նպաստավոր գնահատելուց հետո 1920 թ. սեպտեմբերին քեմալականները հարձակում սկսեցին Հայաստանի Հանրապետության դեմ: Թուրք-հայկական պատերազմում քեմալականների հետապնդած նպատակների մասին է վկայում թուրքական արտգործնախարար Մուհթար բեյի հեռագիր- կարգադրությունը, որը 1920 թ. նոյեմբերին նա ուղարկում է արևելյան ճակատի հրամանատար Քյազըմ Քարաբեքիր փաշային, ով գլխավորում էր Հայաստանի դեմ ռազմական հարձակումը. «...Բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի: Դրանից բխում է, որ քննարկման առարկա չի կարող լինել հայերի հետ պարզ մի զինադադարի համաձայնության արդյունքում մեր հետ քաշվելը: Հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն եւ Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երեւալուն... Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է զորացրել հայկական բանակը եւ բռնագրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու եւ մահմեդական ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողությունը հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա եւ այդպիսով մեր ձեռքում պահել Թուրքիան Ադրբեջանին կապող բոլոր ճանապարհները: Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկված ու փափուկ ձեւով՝ ինչպես խաղաղության պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աչքերում մշտապես խաղաղասեր երեւալու պայմանով»: Ադրբեջանի հետ ցամաքային կապ ունենալու խնդրի կարևորության մասին է վկայում նաև 1920 թ. սեպտեմբերին Մուստաֆա Քեմալի հեռագիրը ռազմական գործիչ, Մոսկվայում քեմալականների դեսպան Ալի Ֆուաթ Ջեբեսոյին. «Հայերի դեմ բարենպաստ պատերազմ սկսել և չիրաժարվել Ադրբեջանը Թուրքիային միավորելու մտքից»: Թուրք հեղինակ Ա. Ջոշքունն այն կարծիքն է հայտնում, որ այդ շրջանում թուրքական կողմի համար գերխնդիր էր «Կովկասյան պատ» (Kafkas seddi) որակվող Հայաստանի ոչնչացումը, այլապես Թուրքիան չէր կարող զարգանալ և ծավալվել դեպի Արևելք:

Այս ամենին զուգահեռ Հարավային Կովկասում նորից ամրանում էին բոլշևիկյան Ռուսաստանի դիրքերը: Ավելի հզոր հակառակորդի առաջ գալով՝ քեմալականները հասկանում էին, որ այդպիսի պայմաններում ողջ Կովկասը նվաճել այլևս չի հաջողվելու, ուստի, նվազագույնը, պետք էր նպաստել Ադրբեջանի՝ հնարավորինս ուժեղացմանը: Այդ մասին է վկայում արտգործնախարար Մուհթար բեյի վերոնշյալ հեռագրի հաջորդ կարգադրությունը. «Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն»: Թուրքիա-Ադրբեջան ցամաքային կապն ապահովելու համար թուրք-հայկական պատերազմի ընթացքում թուրքական զորքերը գրոհեցին ոչ միայն կենտրոնական՝ Ալեքսանդրապոլի ուղղությամբ, այլև հարավային՝ փորձելով նվաճել Ադրբեջանին միացնող Արաքսի հովիտը ու հարակից շրջանները: Նշված ժամանակահատվածում Հայաստանի հարավային շրջաններով (Սուրմալու-Երևանի նահանգի հարավ-Շարուր-Նախիջևան-Սյունիք-Արցախ) Ադրբեջանի հետ ընդհանուր ցամաքային սահման ձևավորելու գաղափարը շատ կարևոր էր քեմալականների համար հետևյալ պատճառներով.

այդ ճանապարհը լեռնաաշխարհագրական առումով առավել դյուրին էր (կազմված էր Արաքսյան հովտից և հարակից հարթավայրային գոտուց), իսկ կլիմայական տեսանկյունից՝ առավել բարենպաստ (ի տարբերություն ավելի հյուսիս ընկած ճանապարհային այլընտրանքների՝ այն գրեթե ամբողջ տարի զերծ էր եղանակային խոչընդոտներից (ձյուն, փոթորիկ և այլն),

այս գոտում առկա էին որոշակի ճանապարհային ենթակառուցվածքներ (օր.՝ երկաթուղի մինչև Ջուղա (Ջուլֆա), որն այնուհետև ձգվում էր դեպի թյուրքախոսներով բնակեցված Թավրիզ),

աշխարհագրորեն ավելի կարճ էր և ապահովում էր կապ ոչ միայն դեպի Բաքու, այլև ամենամոտն էր թյուրքախոս Ատրպատականին և թյուրքախոսների հոծ բնակության այլ վայրերին:

Պատերազմական գործողությունների ծավալմանը և հայկական կողմի պարտություններին զուգահեռ՝ 1920 թ. նոյեմբերի 18-ին՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովում, իր ելույթում, անդրադառնալով Հայաստանի հետ զինադադարի համաձայնության պայմաններին, Քեմալը նշում է. «Հարավից Ադրբեջան տանող ճանապարհները պիտի լինեն լիովին անվտանգ: Ահա այսպիսի առաջարկ ունի Գլխավոր սպայակույտը, պարոնայք: Զինվորականները ճիշտ ժամանակին հանդես եկան իրենց առաջարկով»:

Պետք է նշել, որ թուրքական բանակների արշավանքներից առաջ և դրանց զուգահեռ խորհրդայնացված Ադրբեջանը ողջ 1918-1920 թթ. ընթացքում տարբեր ծավալի ռազմական, ինչպես նաև ներքին պառակտիչ գործողություններով փորձում էր նվաճել Նախիջևանը, Սյունիքը և Արցախը՝ ընդհանուր թուրք- ադրբեջանական սահման ձևավորելու նպատակով:

Այս գոտու աշխարհաքաղաքական կարևորությունը գիտակցելով՝ Խորհրդային Ռուսաստանը ևս ներգրավված էր նշված երկրամասերի ճակատագրի որոշման գործընթացում: Ուստի պատահական չէ, որ թուրք-ադրբեջանական կողմը դիվանագիտական ակտիվ աշխատանք էր տանում բոլշևիկյան Ռուսաստանի հետ՝ հարցն ի օգուտ իրենց լուծելու համար: Հենց այս ջանքերի, ինչպես նաև բավական բարդ աշխարհաքաղաքական ու ռազմական զարգացումների արդյունքում մինչև 1920 թվականի սեպտեմբեր

Շարունակությունը՝ էջ 6

«Թուրանի ճանապարհի» գաղափարի ծնունդն ու իրականացման առաջին փորձերը 1914-1921 թթ.

Սկիզբը՝ էջ 5

արձանագրվել էր, որ հայկական Նախիջևանը, Սյունիքն ու Արցախը դառնում են վիճելի տարածքներ: Սա, կարելի է ասել, արդեն իսկ միջանկյալ փոքրիկ հաղթանակ էր թուրք-ադրբեջանական տանդեմի համար: Այստեղ պետք է նշել նաև Թուրքիա-Ադրբեջան ընդհանուր սահմանի կարևորությունը քեմալականների համար և դրանից բխող սպառնալիքը՝ Խորհրդային Ռուսաստանի համար արձանագրում էր նաև ռուսական կողմը: Արդեն 1920 թ. նոյեմբերին Վ. Լենինին ուղղված հեռագրում Ի. Ստալինը հայտնում է, որ թուրքերի «ձգտումն է՝ ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ», որը վերջինս համարում է «առավել վտանգավոր»: Հայաստանի և մասնավորապես «վիճելի տարածքների» ու ի մասնավորի՝ Սյունիքի աշխարհաքաղաքական կարևորության մասին է վկայում Գ. Օրջոնիկիձեի նամակը Ի. Ստալինին, որտեղ նա դեպի Հայաստան բոլշևիկյան արշավանքը կարևորելով՝ այն որակում է որպես «սեպով խրվել» թուրքերի և Ադրբեջանի միջև: Պատերազմի դաշտում 1920 սեպտեմբեր-նոյեմբերին թուրքական զորքերը կարողացան հասնել առավելության հայկական կողմի հանդեպ՝ գրավելով Հայաստանի Հանրապետության զգալի տարածքներ: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված պայմանագրով Թուրքիան ստացավ ոչ միայն Սուրմալուի գավառը, այլև Նախիջևանը, Շարուրն ու Շահթախթին փաստացի տնօրինելու հնարավորություն: Թեև պայմանագիրը փաստացի չեղարկվեց դրանից առաջ արդեն իսկ տեղի ունեցած Հայաստանի խորհրդայնացմամբ, սակայն այստեղ էական է արձանագրել, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով ևս Թուրքիան փորձում էր ուղիղ սահման ձեռք բերել Ադրբեջանի հետ:

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի լիարժեք խորհրդայնացումից հետո Թուրքիայի՝ Հարավային Կովկասում տարածքային ձեռքբերումներն ու սահմանները որոշվելու էին քեմալականների և բոլշևիկների բանակցություններում: Սակայն մինչ այդ՝ խորհրդա-թուրքական բանակցություններին զուգահեռ, Թուրքիան շարունակում էր փորձերը Հարավային Կովկասում հնարավորինս ամրապնդելու իր դիրքերը՝ ավելի բարենպաստ պայմաններում բանակցելու և հետագա ծավալման նպատակով: Ընդ որում՝ այս փուլում թիրախում գլխավորապես Նախիջևանի շրջանն է:

Այսպես, 1920 թ. վերջին, երբ քննարկվում էին ռուս-թուրքական խորհրդաժողովի հարցերը, թուրքերն էլ ավելի են ակտիվացնում իրենց գործողությունները Նախիջևանում: 1921 թ. հունվարին երկրամասում թուրքական զորքերի հրամանատար Վեյսալ բեյը երկու անգամ փորձում է տապալել խորհրդային իշխանությունը, սակայն հաջողություն չի ունենում: Այս առիթով Նախիջևանի արտակարգ կոմիսար Վելիբեկովը զեկուցում էր հետևյալի մասին. «Թուրքիան վերջին ժամանակներս սիրախաղ է անում ինչպես մեզ, այնպես էլ Անտանտայի հետ և, ինչպես վերջին փաստերն են ցույց տալիս, թեքվել է Անտանտայի կողմը: Նա ցանկություն ուներ զավթել սեպաձև խրված Նախիջևանի շրջանը՝ իրականացնելու համար իր պլանը. բարձրացնել ընդհանուր հակահեղափոխություն սկսած Անատոլիայից, Մակուից, Նախիջևանից, պարսկական Ադրբեջանից և վերջացրած Խորհրդային Ադրբեջանով:

«Թյուրքական դարպասն» ու «Եռանկյունի գոտին»

1920 թ. վերջին քեմալաբոլշևիկյան բանակցություններում Թուրքիան նպատակադրված էր ամրագրել նախորդող ամիսներին իր տարածքային ձեռքբերումները Հարավային Կովկասում և դարձյալ փորձել ստանալ Ադրբեջանի հետ ուղիղ ցամաքային կապ: Ընդ որում՝ այն դիտարկվում էր երկարաժամկետ հեռանկարում որպես ոչ միայն Ադրբեջանի, այլ ամբողջ թյուրքական աշխարհի հետ կապի ապահովման անհրաժեշտ պայման: Քեմալականները համոզված էին, որ բարենպաստ աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում ամրագրված նույնիսկ նվազագույն ձեռքբերումը թույլ կտա նորից հավակնել թյուրքական աշխարհի վրա Թուրքիայի քաղաքական ազդեցության գոտու ձևավորմանը: Այս տրամաբանությունից ելնելով՝ Մոսկվայում բանակցություններ վարող թուրքական պատվիրակության ղեկավար Յ. Քեմալին ուղղված իր հրահանգում Մուսթաֆա Քեմալը նշել էր. «Նախիջևանը թյուրքական դարպասն է: Այս հանգամանքը ուշադրության կենտրոնում պահելով՝ արեք առավելագույնը»: Պահպանվել է նաև Ի. Ստալինի և Յ. Քեմալի միջև զրույցի արձանագրությունը, որը տեղի է ունեցել Մոսկվայում՝ բանակցությունների ընթացքում, և որում ի պատասխան Ստալինի «ինչո՞ւ եք այդքան համառում Նախիջևանի մասով» հարցմանը՝ Յ. Քեմալը նշել է, որ «Դա թյուրքական դարպասն է, այդ պատճառով»:

Սկսված բանակցություններում թուրք-ադրբեջանական տանդեմը նախ պետք է հասներ Նախիջևանի հանդեպ թուրքական վերահսկողության հաստատման: Դրանից հետո վերջինիս հետ ուղիղ ցամաքային կապի ապահովման համար անհրաժեշտ էր ևս երկու երկրամասի հանդեպ թուրքական վերահսկողության հաստատում: Առաջինը Սուրմալուի գավառն էր, որը գրավվել էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ և անհրաժեշտ էր իրավական հաստատում տալ այս նվաճմանը: Սակայն դա էլ բավարար չէր, որպեսզի ուղիղ կապ հաստատվի Նախիջևանի հետ, քանի որ Սուրմալուի և Նախիջևանի արևելքում սեպի պես խրված էր Երևանի գավառի հարավ-արևմտյան հատվածը, որը մաս էր կազմում Խորհրդային Հայաստանի տարածքի: Այն ձգվում էր Արարատ կայարանից մինչև Գայլի Դրունք կոչվող վայրը՝ ձևավորելով յուրահատուկ «Եռանկյուն գոտի»: Ուստի կարելի է ասել, որ բոլշևիկյան Ռուսաստանի հետ բանակցություններում թյուրքական աշխարհի հետ կապ ապահովելու համար Թուրքիան ուներ երեք խնդիր՝ թուրքական (ադրբեջանական) վերահսկողություն ապահովել համապատասխանաբար Նախիջևանի, Սուրմալուի և «Եռանկյուն գոտու» վրա:

Բանակցությունների ընթացքում պարզ դարձավ, որ Նախիջևանը հնարավոր չէ կցել Թուրքիային, քանի որ դա չէր բխում բոլշևիկյան շահերից և վերջիններս ընկալում էին այն՝ որպես Կովկասի վրա լիարժեք ազդեցություն ունենալու կարևոր հանգրվան: Ելնելով նշված իրավիճակից՝ քեմալականները հետամուտ եղան, որ այն ոչ մի դեպքում չանցնի Հայաստանին և որևէ կարգավիճակով տրվի Խորհրդային Ադրբեջանին՝ այդպիսով ապահովելով թեկուզ ընդհանուր առմամբ խորհրդային, սակայն էությամբ թյուրքական իրավասություն Նախիջևանի վրա: 1920 թ. Սուրմալուի ռազմական նվաճումը թույլ տվեց բանակցությունների ժամանակ հայկական այդ տարածքի բռնակցումը Թուրքիային ձևակերպել որպես հստակ պահանջ և հասնել դրա ճանաչմանը բոլշևիկների կողմից: Մոսկվայի բանակցություններում չլուծված պետք է մնար միայն «Եռանկյուն գոտու» հարցը:

Մի քանի ամիս տևած բարդ բանակցությունների արդյունքում Մոսկվայում 1921 թ. մարտի 16-ին կնքվում է քեմալաբոլշևիկյան «Բարեկամության և եղբայրության» պայմանագիրը: Սակայն այն, ըստ էության, Հարավային Կովկասի սահմանազատման փաստաթուղթ էր, որով երկու կողմերը նշված տարածաշրջանի վրա իրենց ազդեցության գոտիներն էին բաժանում: Եվ կարելի է ասել, որ 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը թղթով ամրագրեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև Հարավային Կովկասի համար պայքարի հերթական փուլի արդյունքները: Մոսկվայի պայմանագրով բոլշևիկյան Ռուսաստանը ճանաչեց Հարավային Կովկասի մի շարք կարևոր տարածքների անցումը Թուրքիային: Նախիջևանի մարզը ձևավորվեց որպես ինքնավար հանրապետություն՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, իսկ Հայաստան- Թուրքիա նոր սահմանն անցավ Արաքս և Ախուրյան գետերի ջրբաժանով՝ այդպիսով Թուրքիային թողնելով նաև Սուրմալուի գավառը: Թուրքական պատվիրակության անդամների վերադարձից հետո Մուսթաֆա Քեմալը վերջիններիս հետ հանդիպմանը հայտարարել է. «Մեր այդ դուռն (կարդա՝ «թյուրքական դարպասը»՝ Նախիջևանը) ապահովում է մեր գոյությունը: Մեզ համար դա է կարևոր»:

Մոսկվայի պայմանագրի արդյունքներով Թուրքիա-Ադրբեջան ցամաքային կապի ապահովման համար միակ չլուծված հարցը մնաց «Եռանկյուն գոտին», որի հարցում Թուրքիան ցուցաբերում էր մեծ համառություն: Բանակցություններում քեմալականները և Խորհրդային Ադրբեջանը ձգտում էին Երևանի գավառի հարավային այդ հատվածը ևս կցել Նախիջևանին (Շարուրի գավառակի հետ միասին)՝ այդպիսով ապահովելով ընդհանուր ցամաքային՝ սահման: Մոսկվայի կոնֆերանսում Թուրքիայի պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալը հայտարարում էր, որ «Եռանկյուն գոտու» հարցը խիստ կարևոր է Թուրքիայի արևելյան սահմանների պաշտպանության տեսակետից: Մոսկվայի պայմանագրի նախընթաց բանակցություններում Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինի և թուրքական պատվիրակության միջև տեղի ունեցած երկար բանավեճից հետո կողմերն ի վերջո համաձայնեցին, որ Գայլի Դրունքից հյուսիս- արևմուտք ընկած «Եռանկյուն գոտու» հատվածը համարվում է վիճելի և նրա պատկանելության հարցը կլուծվի Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից: Ուստի հետագա մի քանի ամիսներին՝ մինչև Կարսի խորհրդաժողովի անցկացումը, քեմալականները և Խորհրդային Ադրբեջանն իրենց ուժերը կենտրոնացրին լուծելու այդ տարածքի հարցը, թեև դրա համար որևէ իրավական հիմք առկա չէր: Ակնհայտ էր, որ այդ առաջին հայացքից անապատային հողակտորի համար կատաղի պայքարն իրականում հետապնդում էր կարևորագույն պանթյուրքական նպատակ: Պատահական չէ նաև, որ Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինը բավական երկար դիմադրում էր այս հարցում՝ փորձելով «Եռանկյուն գոտին» պահել Խորհրդային Հայաստանի կազմում, թեև այլ հայկական տարածքների հետ կապված հարցերում երբեք այդպիսի համառություն ցույց չէր տվել: Կարելի է ենթադրել, որ վերջինս կռահել էր քեմալականների պահանջի պանթյուրքական էությունը:

Չնայած Խորհրդային Ռուսաստանի ու Հայաստանի դիվանագետների փորձերին՝ «Եռանկյուն գոտին» ամբողջությամբ պահել չստացվեց: 1921 թ. ընթացքում մի քանի ամիս տևած դիվանագիտական պայքարից ու նաև բոլշևիկյան որոշակի շրջանակների ճնշման ներքո ի վերջո՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը նույն թվականի ամռանը համաձայնեց պահել «Եռանկյուն գոտու» միայն հյուսիսային հատվածը (Արարատ կայարանից մինչև Արազդայան կայարան (Երասխ)), իսկ հարավայինը (Արազդայանից մինչև Գայլի Դրունք վայրը) զիջեց Նախիջևանին, այսինքն՝ Ադրբեջանին: Այսպես Երևանի գավառի հարավ-արևելյան մի հատվածը ևս կտրվեց Խորհրդային Հայաստանից և միացվեց Նախիջևանի երկրամասին, որով և ապահովվեց թուրք-ադրբեջանական ընդհանուր սահմանի առկայությունը Ուրմիա գյուղից (Արաքսի ձախ ափին), մինչև Ստորին Կարասու գետի՝ Արաքս գետին միախառնվելու հատվածը (Արաքսի աջ ափին): «Եռանկյունու» այդ հատվածն ուներ շուրջ 9-10 կմ երկարություն, սակայն այն վերածվեց կարևորագույն ռազմավարական նշանակության գոտու, քանի որ ապահովում էր Թուրքիա-Նախիջևան՝ Ադրբեջան ուղիղ ցամաքային կապը: Այս հարցում մեծ ներդրում ունեին ադրբեջանցի բոլշևիկները (հատկապես ակտիվ էր Բ. Շահթախթինսկին), որոնք տարաբնույթ միջոցներով (այդ թվում՝ շանտաժով) կարողացան հասնել նշված արդյունքին:

Տարածքային և ռազմավարական այս նվաճումները քեմալականները ամրագրեցին 1921 թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի թուրք-անդրկովկասյան «Բարեկամության պայմանագրով»: Այն չնչին փոփոխություններով վերահաստատեց Մոսկվայի պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանը:

Կարսի պայմանագրով հաստատվեց նաև Նախիջևան- Հայաստան-Թուրքիա սահմանի նոր տեսքը, որի վերջին «չլուծված» կամ «վիճելի» հարցը՝ «Եռանկյուն գոտին» կիսվել էր: Այն, որ նախապես քեմալականները տեղյակ էին Խորհրդային Ադրբեջանի կողմից՝ «Եռանկյուն գոտու» շուրջ վարվող բանակցություններին և, փաստացի, սակայն կուլիսային, ներգրավված էին իրենց համատեղ ծրագրի իրականացման գործին՝ այդ տարածքի բռնակցմանը, հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Կարսի բանակցություններում Թուրքիայի պատվիրակությունն իսկույն համաձայնեց ճանաչել Ադրբեջանի և Հայաստանի կողմից գծված սահմանները՝ ի տարբերություն բանակցությունների օրակարգում առկա մնացած բոլոր հարցերի: Կարսի կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուհթար բեյի հետևյալ խոսքերը լավագույնս բնութագրում են Թուրքիա-Ադրբեջան ցամաքային կապի ապահովման հարցի կարևորությունը քեմալականների համար. «Այդ զիջումների դիմաց մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և եղբայրական Ադրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»:

Այսպիսով, 1920-1921 թթ. ընթացքում քեմալականները ռազմական, քաղաքական և դիվանագիտական հետևողական աշխատանքի շնորհիվ կարողացան հասնել իրենց առջև դրված առաջնային երեք խնդիրների լուծմանը.

Հարավային Կովկասում նվաճել կարևոր ռազմավարական տարածքներ և իրավաբանորեն ամրագրել դրանց բռնակցումը՝ այդպիսով դառնալով նաև կովկասյան աշխարհաքաղաքականության մասնակից երկիր,

աջակցել իր իսկ կողմից ստեղծված թյուրքական պետական միավորի՝ Ադրբեջանի կայացմանը և տարածքային նվաճումներին (մասնավորապես՝ Արցախի և Նախիջևանի հարցում),

ձևավորել Ադրբեջանի հետ ուղիղ ցամաքային սահման Նախիջևան-Սուրմալու գծով, որը թույլ կտար կենսունակ պահել թյուրքական առանցք ձևավորելու գաղափարը և հարմար աշխարհաքաղաքական իրադրության պարագայում շարունակել պանթյուրքական գլոբալ ծրագրերը:

Բոլոր երեք նպատակներն էլ բխում էին նախկինում Օսմանյան կայսրության կողմից վարվող հարավկովկասյան քաղաքականության տրամաբանությունից և 1920-1921 թթ. ռազմական, ապա քաղաքական գործողությունները կարելի է համարել երիտթուրքական կառավարության պանթյուրքական քաղաքականության օրգանական շարունակություն: Թեև քեմալականների տարածքային ու ռազմավարական ձեռք բերումները տվյալ փուլում միայն մասամբ էին համապատասխանում նախկինում առկա նպատակներին, սակայն դրանք բավարար հիմք էին ստեղծում հետագայում՝ առավել բարենպաստ պայմաններում Հարավային Կովկասում և դրանից անդին ավելի խորանալու և ծավալվելու համար: Հետագա տարիներին Թուրքիայի նախագահ Մուսթաֆա Քեմալը պարբերաբար հիշեցնում էր, որ թեև այս պահին անհրաժեշտ ռեսուրսները չկան, սակայն պետք է ունենալ ձգտումներ: Այսպես՝ 1933 թ. հոկտեմբերին՝ հանրապետության 10-ամյակի առթիվ իր ծրագրային ելույթում Մուսթաֆա Քեմալը, նկատի ունենալով ԽՍՀՄ տարածքում ապրող թյուրքախոս ժողովուրդներին և նրանց՝ Թուրքիայի հետ միավորելու անհրաժեշտությունը, նշել է. «Այսօր Խորհրդային Ռուսաստանը մեր ընկերն է, հարևանն է, դաշնակիցն է: Որպես պետություն այդ ընկերության կարիքն ունենք: Սակայն ոչ մեկ չի կարող ասել, թե ինչ կլինի վաղը: ...Հենց այդ ժամանակ Թուրքիան պետք է իր անելիքն իմանա: Մեր այս ընկերոջ իշխանության ներքո մենք ունենք եղբայրներ, ում հետ մի լեզու, մի հավատ, մի ինքնություն ունենք: Մենք պետք է պատրաստ լինենք նրանց օգնելու: Պատրաստ լինել չի նշանակում լուռ մնալ ու այդ օրվան սպասել. անհրաժեշտ է պատրաստվել: ... Ես այսօր որքան ջանում եմ ժամանակակից Թուրքիա կառուցել, այդչափ էլ ուշադրություն եմ դարձնում, որ գցեմ վաղվա Թուրքիայի հիմքերը»:

Պանթյուրքական նպատակների տեսանկյունից գլխավոր ձեռքբերումը, ինչ խոսք, Նախիջևանի հետ ուղիղ կապի ապահովումն էր, սակայն հաշվի առնելով այն, որ նույն ժամանակահատվածում Արցախն ինքնավար մարզի կարգավիճակով բռնակցվել էր Ադրբեջանին, կարելի է ասել, որ 1921 թ. վերջին Հարավային Կովկասում ձևավորվել էր թյուրքական գոտի-միջանցք, որը

Նախընտրական քարոզարշավով Սյունիք այցելող Նիկոլ Փաշինյանին. ընտրողին հաշվետվություն տալու ժամանակը

Սկիզբը՝ էջ 3

փի» շուրջ:

Նախ՝ աշխարհագրական տեսակետից կամ ֆիզիկական իմաստով ի՞նչ է իրենից ներկայացնելու այդ ուղին:

Ավելի պարզ՝ քանի՞ քառակուսի կիլոմետր է տրամադրվելու «Թրամփի ուղուն» և խոսքը ո՞ր տարածքների մասին է (ադրբեջանական և թուրքական քարտեզներում Սյունիքի մարզի ամբողջ տարածքն այլևս մատնանշվում է «Զանգեզուրի միջանցք» անվամբ):

Ի՞նչ ասել է «անխոչընդոտ» ճանապարհ Ադրբեջանի երկու հատվածի միջև:

Կամ՝ որքանո՞վ է «Թրիփփը» առնչվում Սյունիքի անվտանգության ապահովմանը, այն էլ՝ իրանական վերջին պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում:

Որքանո՞վ և ինչպե՞ս է պահպանվելու հայոց ինքնիշխանությունը Սյունիքի այդ հատվածում:

Չափազանց կարևոր մի հանգամանք ևս. Սյունիքի տարածքի մի մասը մոտ 100 տարով տրվում է այլ երկրի, որն էլ (ըստ հրապարակված փաստաթղթերի) կարող է հետագայում փոխանցվել 3-րդ երկրի, բայց տեղաբնակներիս կարծիքը Դուք չեք հարցնում՝ թեկուզև տեղական հանրաքվե կազմակերպելով:

Իսկապես՝ իսկ Սյունիքի բնակիչներն ուզո՞ւմ են, որ Թուրքիան ու Ադրբեջանը մարզի տարածքով միմյանց կապվեն «անխոչընդոտ» ճանապարհով:

Կամ՝ եթե Ադրբեջանի երկու հատվածը տրանսպորտային ուղիով միմյանց կապելու խնդիրն աշխարհին այդպես մտատանջում է, ապա ինչո՞ւ նույն մտահոգությունը չենք տեսնում Կապան-Գորիս, Կապան-Ճակատեն, Կապան-Եղվարդ, Վերիշեն-Սև լիճ ճանապարհների ապաշրջափակման հարցում:

Ինչո՞ւ Մեղրու բնակիչը չպետք է կարողանա Նախիջևանով՝ «անխոչընդոտ», հասնել մայրաքաղաք:

9. Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ էին Հայաստանի վերջին հարյուր տարվա կառավարիչները դեմ արտահայտվում Մեղրիի տարածքով Ադրբեջանի ու Թուրքիայի միջև «անխոչընդոտ» ճանապարհ ստեղծելու ադրբեջանաթուրքական երազանքի իրականացմանը, իսկ Դուք՝ ընդհակառակը:

Եվ ինչո՞ւ ենք մենք լռությամբ ի գիտություն ընդունում հրամցվող սուտը, թե իբր Ադրբեջանի արևմտյան շրջանների ու Նախիջևանի միջև կապ չկա: Չէ՞ որ, իրականում, Նախիջևանը հետխորհրդային շրջանում երբեք էլ շրջափակման մեջ չի եղել, ու Ադրբեջանի երկու հատվածի միջև գործել ու գործում են և՛ տրանսպորտային, և՛ օդային հաղորդակցության ուղիներ:

10. Դուք ի սկզբանե կարևորել եք հրապարակայնությունը և Ձեր առօրյայի կենցաղային որոշ դրվագներ անգամ սփռել ու սփռում եք համացանցով:

Միևնույն ժամանակ այդպես էլ չկարողացանք իմանալ՝ չորս տարի շարունակ ինչո՞վ էր զբաղված Սյունիքի մարզպետի պաշտոնը զբաղեցնող անձնավորությունը:

Նախորդ երկու դեպքում հրապարակավ ներկայացրիք, թե ինչու եք Հունան Պողոսյանին կամ Մելիքսեթ Պողոսյանին նշանակում Սյունիքի մարզպետ (նրանք, ի դեպ, շարունակում են վայելել տեղացիներիս հարգանքն ու վստահությունը):

Հիմա, գոնե ուշացումով, կարո՞ղ եք ասել՝ ո՞ր մի արժանիքի համար եք գործող մարզպետին կարգել այդ պաշտոնին և ինչո՞ւ եք հանդուրժում նրա բացակա ներկայությունը:

11. Սյունիքի ռազմավարական բացառիկ նշանակությունը հաշվի առնելով՝ և՛ Հայաստանի առաջին հանրապետության օրերում, և՛ Խորհրդային Հայաստանի ժամանակ, և՛ անկախության տարիներին մեր երկրամասի հանդեպ Հայաստանի իշխանությունները տարբերակված քաղաքականություն են վարել:

Կարեն Դեմիրճյանից մինչև Վազգեն Սարգսյան ու Անդրանիկ Մարգարյան, օրինակ, մի քանի որոշում է ընդունվել Սյունիքի մարզի և հատկապես Մեղրու շրջանի հիմնախնդիրների վերաբերյալ:

ՀՀ առաջին նախագահն էլ նույնիսկ ՀՀ պետնախարարի ինստիտուտ հիմնեց՝ Սյունիքի հարցերով զբաղվող՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ, որի գործառույթներից մեկն էլ «Սյունիք–Զանգեզուր» պետական ռազմավարական ծրագրի մշակումն էր:

Հիմա, երբ (գրեթե ամեն օր), այն էլ՝ թմբկահարվող խաղաղության պայմաններում, Ադրբեջանից սպառնալիքներ ենք լսում, նաև տարածքային հավակնությունների բարբաջ, երբ Սյունիքը 2020-ից ի վեր դարձել է աշխարհաքաղաքական գործոն, չե՞ք կարծում, որ պետք է մշակվի և գործողության մեջ դրվի սյունիքյան նոր քաղաքականության ռազմավարություն, ստեղծվի տարածաշրջանի կառավարման նոր մոդել կամ ինստիտուտ:

12. Չգիտեմ՝ տեղյա՞կ եք, որ մարզի բազմաթիվ բնակավայրեր (հատկապես լեռնային և բարձր լեռնային գոտում) հոգեվարք են ապրում ու կանգնած են լինել–չլինելու ստույգ վտանգի առջև:

Այդ ամենին զուգահեռ, որքան էլ տարօրինակ է, Տաթև համայնքում, օրինակ, մարդիկ տարիներով չեն կարողանում ձեռք բերել տնամերձ հողամաս և շինթույլտվություն՝ իրենց իսկ բնօրրանում, իրենց իսկ միջոցներով սեփական բնակարան (առանձնատուն) կառուցելու համար:

Ընդ որում՝ Ձեզ դիմելուց հետո անգամ սառույցը չի ջարդվել:

Փորձեք պարզաբանել՝ ինչո՞վ է պայմանավորված նման իրավիճակը՝ համայնքապետի ու համայնքապետարանի անձեռնհասությա՞մբ, կամայականությա՞մբ, թե՞ այդ գործելակերպը կառավարության կողմից ուղղորդված գիծ է:

Եվ ընդհանրապես՝ ութ տարվա ընթացքում ի՞նչ է արել ՀՀ կառավարությունը լեռնային ու բարձրադիր գոտու գյուղերի ամրապնդման ուղղությամբ:

13. 2025 թվականին չորս կամ հինգ անգամ այցելեցիք Սյունիք, ՀՀ նախագահն էլ՝ երկու կամ երեք անգամ:

Եթե գաղտնիք չէ՝ ի՞նչ հարցեր են Սյունիքում լուծվել երկրի բարձրագույն իշխանավորների մեծաթիվ այդ այցելությունների արդյունքում:

14. Վերջին հարցը. ի տարբերություն մայրաքաղաքում հանգրվանած փոքրաթիվ եվրոպամետների ու թուրք-ադրբեջանամետների, ինչպես և օրեր առաջ Հայաստան ժամանած եվրոպացի առաջնորդներից մի քանիսի հակառուսական ու հակաիրանական պահվածքի, հազարավոր սյունեցիների համար (հասկանալի պատճառներով) էական նշանակություն ունի քաղաքական ուժերի վերաբերմունքը հայ-իրանական և հայ-ռուսական հարաբերությունների ներկա ընթացքի և ապագայի հանդեպ:

Ուստի և հետաքրքիր է Ձեր գլխավորած քաղաքական ուժի դիրքորոշման վերջնական հստակեցումն այդ հարցում:

* * *

Եվ, իհարկե, մի քանի դիտարկում...

Թե ինչ արդյունքներ կունենան հունիսի 7-ի ընտրությունները՝ կիմանանք ժամանակին, թեև պարբերաբար անցկացվող սոցհարցումները որոշակի պատկերացում են արդեն տալիս:

Ձեր գլխավորած քաղաքական ուժը, եթե նույնիսկ նոր կառավարություն ձևավորելու հնարավորություն ստանա (վարչական ռեսուրսի և այլ ուժերի աջակցությամբ), միևնույնն է, առնվազն սյունիքյան դաշտում՝ բարոյական տեսակետից, հաղթող լինել չի կարող:

Եվ ՔՊ–ի, և՛ անձամբ Ձեր կերպարի ներկայիս հանրային ընկալումները նախկինի հետ հեռավոր աղերս անգամ չունեն:

Ու նման կացության մեջ հայտնվել եք ոչ թե ընդդիմության, ոչ թե լրատվամիջոցների հակառակությամբ, այլև Ձեր իսկ գլխավորած քաղաքական ուժի՝ այսպես կոչված երևելիների և, իհարկե, Ձեր հետևողական ջանքերով:

Տասնյակ մարդիկ Սյունիքում, օրինակ, թաքնվել են Ձեր անձրևանոցի ներքո և ընդամենը պաշտոն են զբաղեցնում, փող աշխատում... Բայց այդ փաղանգում չկա գոնե մեկը, որ կարողանա կամ ի վիճակի լինի հրապարակավ ու գրագետ ներկայացնել Նիկոլ Փաշինյանի որդեգրած քաղաքական ու գաղափարական գիծը (այլ հարց է, թե այդ գիծը որքան է նույնական ժողովրդի շահերին):

Որքան էլ ցավալի է ու տարօրինակ՝ այդպես էլ չկամեցաք Սյունիքում լինել բոլորի վարչապետը, ինչը սկզբնապես շատերն էին ցանկանում: Եվ եղաք սոսկ մի քանի հոգու վարչապետը Գորիսում, Սիսիանում, Կապանում ու Մեղրիում:

Ձեզ հետ հանդիպելու համար մոբիլիզացվող մարդկանց միջոցով (նաև վերջին 2-3 օրվա ընթացքում) կազմակերպվող տեսարանները, հավատացեք, որևէ նշանակություն չեն ունեցել և չեն ունենա Ձեր քաղաքական ուժի վարկանիշի բարձրացման գործում:

Սյունիքյան քաղաքականության ոլորտում Դուք ոչ միայն ձախողվեցիք: Հազարավորները՝ մեր լեռնաշխարհի հանդեպ Ձեր որդեգրած քաղաքականությունը (ներող եղեք անկեղծության համար) համարում են ոչ բարեկամական և ոչ տրամաբանական:

Եվ այդ մասին՝ այստեղ Ձեզ հետ լուսանկարվողներն ու Ձեր հետևից շնչակտուր վազողները, Ձեզ չեն տեղեկացնում, որովհետև ՔՊ-ի հովանու ներքո են հայտնվել այլ քաղաքական ուժերից փախչելով, ու վաղն էլ մեկ ուրիշ քաղաքական ուժի ուրթում են հայտնվելու:

Դուք այդպես էլ սթափ հայացք չձգեցիք սյունիքյան կադրային քաղաքականությանը և տպավորություն թողեցիք, որ ատում–մերժում եք կարող ուժերին, աշխատող մարդկանց, հայրենի եզերքին նվիրված անձանց: Այդ սկզբունքով էլ կատարել ու կատարում եք կադրերի ընտրություն՝ դրանից բխող հետևանքներով:

Գյուղերից մեկի (ոչ Սյունիքի մարզից) մանկապարտեզի վարիչի նշանակման հարցում Ձեր հրապարակավ հանձնարարականը ենթադրելու տեղ թողեց, որ Սյունիքում կատարվող կադրային ամենափոքր փոփոխությունները անգամ Ձեր ուղղակի հանձնարարությամբ են կատարվում:

Դա էլ մի կողմ: Գոնե տեղյա՞կ եք, թե Սյունիքում անհամերաշխությունն ու հանրության պառակտվածությունն ինչ աստիճանի են հասել, այն էլ՝ Ձեր իշխանության ներկայացուցիչների ակտիվ դերակատարությամբ:

Քվեարկության գնալուց առաջ, անշուշտ, մեզանում ուրիշ հարց ևս կառաջանա՝ քվեարկել նախընտրական ծրագրե՞րը հիմք ընդունելով, թե՞ կոնկրետ գործերը հաշվի առնելով:

Ձեր քաղաքական ուժի պարագայում նախընտրական ծրագիրը հիմք ընդունելը դժվար թե ողջամիտ լինի, քանզի (ինչպես փորձն է ցույց տալիս) ծրագրից հետագայում հեռացել եք:

Իսկ եթե հիմք ընդունենք գործերը, ապա այդ տեսակետից ուրիշ հարցեր կարող են առաջանալ: Օրինակ, մարդիկ հարց են տալիս՝ գնանք ՔՊ–ի օգտին քվեարկենք որ ի՞նչ լինի... Որ Ռոբերտ Ղուկասյանն ու Արմեն Խաչատրյանը նորից իշխանության մե՞ջ լինեն՝ հանուն ոչնչի, որ Ժաննա Անդրեասյանը նախարար մնա և իրագործի Սյունիքում 48 դպրոց «օպտիմալացնելու» ծրագի՞րը, որ այդ նախարարը դրամաշնորհային մրցույթներ և անհատական իրավական ակտե՞ր կեղծի ու 7 մլն դրամ պարգևավճա՞ր ստանա, որ...

Պարոն Փաշինյան

Հին ժամանակներում, երբ վարչապետ չէիք, մեր թերթի բարեկամն էիք, մենք էլ Ձեր սակավաթիվ բարեկամներից էինք Սյունիքում, բայց դա վաղուց հուշիկ է դարձել:

Այդքանով հանդերձ չեմ կարող չասել՝ բարի գալուստ, Սյունիք:

Կարծում եմ՝ Դուք անկեղծանալու, իրականության հետ առերեսվելու վերջին հնարավորությունն ունեք, բայց չգիտեմ՝ կգնա՞ք այդ ճանապարհով, թե՞...

Իսկ անկեղծանալու և իրականության հետ առերեսվելու առաջին քայլը կլինի Ձեր հաշվետվությունը կամ պարզաբանումն անցած տարիներին Սյունիքում կատարած ու չկատարած գործերի մասին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
8 ՄԱՅԻՍԻ 2026 Թ.

Ձգվում էր Թուրքիայի արևելյան սահմանից դեպի Նախիջևան և ապա Արցախի հարավային՝ մերձարաքսյան շրջաններով դեպի Բաքու:

Ուշագրավ է, որ 1926 թ. հնչակյան նշանավոր գործիչ և հրապարակախոս Գ. Եղիկյանը, դիպուկ նկարագրելով այդ օրերի իրադարձությունները և աշխարհաքաղաքական նպատակները, դրանց իրագործման համար գործիք ծառայող ցամաքային կապը բնորոշելու համար ևս կիրառում է «միջանցք» («կորրիտոր») եզրը. «Ազէրբէյջանի ազգայնականները օգտվում են Մոսկվայի տրամադրություններից և կոմունիստները օրից օր Հայաստանը պաշարող շղթան նեղացնում են մի կողմից Հայերի և Պարսիկների մէջ եղած սահմանները վերացնելով այդ երկու երկիրները իրարից բաժանելու, մյուս կողմից էլ մի լայն կորրիտոր անցկացնելու համար Պարսկաստանի և Հայաստանի միջով Թուրքիայի և Ազէրբէյջանի (կովկասեան) մեջ այդ երկու երկիրները ավելի ամուր իրար հետ կապելու համար: ...Իսկ Թուրքիան էլ մտածում է կորրիտորի միջոցով Հայաստանը դարձնել բոլորովին ուժասպառ, Պարսկաստանը զրկել իր ամենալավ երկրամասից և իր հետ միացնել թուրքաբնակ ռուսական հողեր»:

Հայկական տարածքների հարավային շրջանների վրայով ձգվող նշված «գոտի-միջանցքի» միակ հատվածը, որը չնայած բազմաթիվ փորձերին, չհայտնվեց թյուրքական վերահսկողության ներքո, Սյունիք-Զանգեզուրն է (և մասնավորապես՝ դրա հարավային մերձարաքսյան շրջանները): Պատահական չէ, որ 1918-1921 թթ. ողջ ընթացքում Նախիջևանի և Արցախի հետ միաժամանակ կատաղի պայքար էր ընթանում նաև Սյունիքին տիրելու համար, որում դարձյալ Թուրքիան և Ադրբեջանը գործում էին խիստ ներդաշնակ Հայաստանի թե՛ անկախության շրջանում (1918-1920 թթ.), և թե՛ խորհրդայնացումից հետո: Հայտնի է, որ այդ հարցում գլխավոր խոչընդոտը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ հայության պայքարն էր Սյունիքի հայկական պատկանելությունը պահպանելու համար: Թյուրքական գոտու ձևավորման հարցում Սյունիքի գործոնի կարևորության մասին Նժդեհը նշում է. «Թշնամին նպատակադրել էր մեր ժողովրդի մի խոշոր մասի դիակի վրայով կամուրջ նետել Տաճկաստանի (կարդա՛ Թուրքիայի) և Ադրբեջանի միջև և, տեր դառնալով Սյունյաց աշխարհի ու Գողթանի բնական ամրություններին, մշտական սարսափի տակ պահել մեր մատաղ հանրապետությունը»:

Այսպիսով, չնայած 1920-1921 թթ. թուրք-ադրբեջանական կողմի արձանագրած որոշ կարևոր հաջողություններին, այնուամենայնիվ, «միջանցք» ձևավորելու հերթական փորձը տապալվեց: **Սակայն Սյունիքի կամ «թյուրքական միջանցքի» խնդիրը շարունակեց գերակա մնալ Թուրքիայի և Ադրբեջանի համար նաև ԽՍՀՄ գոյության ողջ ընթացքում: Թյուրքական այս վտանգը նկատի ունենալով՝ 1920-ականների վերջին Գ. Նժդեհը գրում էր. «Հայաստանը խոցելի է մի շարք տարբեր կետերից. ընդամենը մի քանի ժամվա ընթացքում այդ կետերով Թուրքիան կարող է կտրել, իրարից բաժանել հայկական գավառակները և միանալ Ազրբէյջանին: Հաջորդող ժամանակաշրջանում թե՛ Ադրբեջանը, թե՛ Թուրքիան համագործակցաբար և հստակ դերաբաժանմամբ իրականացնելու էին մշակված քայլեր, որոնք կրկին պիտի հանդիպեին հայ պետական և քաղաքական գործիչների հակազդեցությանը:**

Պետք է նշել նաև, որ հետագա տարիներին Թուրքիան էլ ավելի ամրացրեց Նախիջևանի հետ իր արևելյան սահմանը՝ այդպիսով ընդգծելով դրա կարևորությունը: Մասնավորապես, 1920-1930-ականներին Իրանի հետ մի քանի սահմանային պայմանագրերի ու տարածքային փոփոխությունների արդյունքում Թուրքիան վերահսկողություն ստացավ Արարատ լեռան ստորոտում (Փոքր Մասիսի շրջանում) գտնվող տարածքների վրա՝ այդպիսով ռազմավարական գերակայություն հաստատելով սահմանի այդ հատվածում և ամրացնելով Թուրքիա-Նախիջևան սահմանային նեղ շեղբի թիկունքը:

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ
ՀԱՏՎԱԾ ««ԹՈՒՐԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՊԸ. «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ՀԻՄՆԱՀԱՐՑԸ (20-21-ՐԴ ԴԱՐԵՐ)» ԳՐՔԻՑ

Երևանը հյուրընկալեց Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ և Հայաստան-ԵՄ գագաթնաժողովները

Երևանը մայիսի 4-ին և 5-ին հյուրընկալեց միջազգային նշանակության երկու խոշոր քաղաքական իրադարձություն:

Մայիսի 4-ին տեղի ունեցավ Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ) 8-րդ գագաթնաժողովը՝ «Կառուցելով ապագան. միասնություն և կայունություն Եվրոպայում» կարգախոսի ներքո: Գագաթնաժողովին մասնակցում էր 47 բարձրաստիճան պատվիրակություն՝ պետությունների և միջազգային կառույցների ղեկավարների մակարդակով (Հայաստանը ներառյալ՝ 48 երկիր):

Գագաթնաժողովին մասնակցում էին գրեթե բոլոր եվրոպական երկրները, այդ թվում՝ Ուկրաինան և Թուրքիան՝ ի դեմս նախագահ Զելենսկու և փոխնախագահ Յըլմազի: Սա Ուկրաինայի նախագահի առաջին այցն է Հայաստան, Երևանում նա՝ մայիսի 3-ին հանդիպել է Չեխիայի վարչապետ Անդրեյ Բաբիշի, Ֆինլանդիայի վարչապետ Պետերի Օրպոյի, Նորվեգիայի վարչապետ Յոնաս Գահր Սթորի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերի հետ:

Երևան չի ժամանել Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը: Գերմանական DPA գործակալությանը կառավարության խոսնակն ասել է. *«Կանցլերը չի կարող մեկնել՝ այլ աշխատանքային զբաղվածության պատճառով»:*

Որպես հատուկ հյուր գագաթնաժողովին մասնակցել է Կանադայի վարչապետ Մարկ Քարնին (սա առաջին դեպքն է, երբ ոչ եվրոպական երկիր է մասնակցում ԵՔՀ հանդիպմանը):

Եվրոպական քաղաքական համայնքի երևանյան գագաթնաժողովին ներկա էր նաև Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը: Հենց նրա նախաձեռնությամբ 2022-ին տեղի ունեցավ ԵՔՀ առաջին հանդիպումը: Եվ այդուհետ անցկացվում է տարին երկու անգամ՝ ԵՄ անդամ և ոչ անդամ պետություններում՝ եվրոպական աշխարհամասի անվտանգությունը, կայունությունը և բարգավաճումը ամրապնդելու համար:

Մինչ այս, գագաթնաժողովները հյուրընկալել են Չեխիան, Մոլդովան, Ալբանիան, Երևանից հետո հաջորդ հավաքը կանցկացվի Իռլանդիայում՝ այս տարվա նոյեմբերին:

Գագաթնաժողովի շրջանակում քննարկվել են ժողովրդավարական դիմակայունության ամրապնդումը, տնտեսական և էներգետիկ անվտանգությունը, ինչպես նաև տրանսպորտային կապերի զարգացումը:

Որպես հատուկ հյուր գագաթնաժողովին մասնակցել է Կանադայի վարչապետ Մարկ Քարնին (սա առաջին դեպքն է, երբ ոչ եվրոպական երկիր է մասնակցում ԵՔՀ հանդիպմանը):

Հայաստան-ԵՄ գագաթնաժողով

ԵՔՀ հավաքից զատ, մայիսի 4-5-ին Երևանում անցկացվեց նաև Հայաստան-Եվրոպական միություն անդրանիկ գագաթնաժողովը: Այս երկկողմ գագաթնաժողովին ԵՄ-ն ներկայացնում էին Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան և Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը, նաև՝ ԵՄ բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասը:

Հայկական կողմից բանակցությունները վարում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Հայաստան-ԵՄ գագաթնաժողովի հիմնական թեմաներն էին.

- Երկկողմ հարաբերությունների խորացում և վիզաների ազատականացում:
- Համագործակցություն էներգետիկայի, տրանսպորտի և թվային ոլորտներում:
- Հարավային Կովկասում խաղաղության և անվտանգության ապահովման ընթացքը:

Գագաթնաժողովի ավարտին հրապարակվեց համատեղ հայտարարություն, տեղի ունեցավ մի շարք ստորագրված փաստաթղթերի փոխանակում, որոնք կարևոր են ԵՄ–Հայաստան գործընկերության խորացման համար:

ԵՄ–Հայաստան հարաբերությունները հիմնված են ԵՄ–Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) վրա, որի առաջնահերթությունները սահմանված են ԵՄ–Հայաստան գործընկերության ռազմավարական օրակարգում:

CEPA-ի միջոցով, որը գործում է 2021 թվականից, Հայաստանը պարտավորվել է իրականացնել համապարփակ բարեփոխումներ՝ հիմնված ժողովրդավարության, թափանցիկության և օրենքի գերակայության վրա: Մասնավորապես՝ պայքարել կոռուպցիայի դեմ, բարեփոխել դատական համակարգը և բարձրացնել դրա հաշվետվողականությունը քաղաքացիների առաջ, ինչպես նաև ապահովել հավասար տնտեսական, զբաղվածության և սոցիալական հնարավորություններ բոլորի համար:

Հայաստանը կդառնա տարածաշրջանային լոգիստիկ հանգույց. մեկնարկել է Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման ծրագիրը

Պետական եկամուտների կոմիտեում տեղի է ունեցել Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման ծրագրի մեկնարկն ազդարարող հանդիսավոր արարողությունը: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «ԱՅ. ԱՐ. ԴԻ. ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» (IRD Engineering) իտալական ընկերության միջև ստորագրվել է ծրագրի իրականացման աջակցման պայմանագիրը, որով պաշտոնապես տրվել է ծրագրի մեկնարկը:

Միջոցառմանը մասնակցել են ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը, ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտին, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Գեորգի Ախալկացին, «ԱՅ. ԱՐ. ԴԻ. ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ընկերության գործադիր տնօրեն Պաոլո Օրսինին, ինչպես նաև Կոմիտեի տարբեր ստորաբաժանումների ղեկավարները:

Էդուարդ Հակոբյանն իր խոսքում ընդգծել է Հայաստանի համար ծրագրի ռազմավարական նշանակությունը.

«Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնը պարզապես խոշոր ենթակառուցվածքային նախագիծ չէ. այն կարևոր քայլ է Հայաստանը տարածաշրջանային լոգիստիկ հանգույց դիրքավորելու ճանապարհին: Ծրագիրը նաև ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության գործնական արտացոլումն է, քանի որ այն դառնալու է տարածաշրջանային կայունության և տնտեսական համագործակցության ժամանակակից ու նորագույն տեխնիկայով հագեցած ենթակառուցվածք»: ՊԵԿ նախագահը շեշտել է, որ ծրագրի իրականացման աջակցման պայմանագիրը ոչ միայն պաշտոնական փաստաթուղթ է, այլև ընդհանուր պատասխանատվության, փոխվստահության և զարգացման հավակնոտ տեսլականի խորհրդանիշը:

Ըստ միջոցառմանը ներկա միջազգային կառույցների ներկայացուցիչների՝ Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման ծրագիրը կարևոր ներդրում է տարածաշրջանային համագործակցության և առևտրի դյուրացման, ինչպես նաև ենթակառուցվածքային զարգացման գործում:

Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման ծրագրի իրականացման աջակցման պայմանագիրը ստորագրել են ՊԵԿ գլխավոր քարտուղար Դավիթ Մաթևոսյանը և «ԱՅ. ԱՐ. ԴԻ. ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ընկերության գործադիր տնօրեն Պաոլո Օրսինին:

Այս խոշոր նախաձեռնությամբ Հայաստանի հարավում կձևավորվի նոր տնտեսական և լոգիստիկ հանգույց՝ միտված միջազգային բեռնափոխադրումների և մաքսային գործընթացների սպասարկման արդիականացմանը, ինչպես նաև ժամանակակից և թվայնացված մաքսային միջավայրի ձևավորմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 14.4 մլն եվրո և ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) վարկային ու դրամաշնորհային միջոցներով, ինչպես նաև ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

Կենտրոնը կկառուցվի Սյունիքի մարզի Շաբի համայնքի հարակից տարածքում՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքին կից և միտված է դեպի հարավ իրականացվող բեռնափոխադրումների դյուրացմանը՝ ապահովելով մաքսային գործընթացների արագ և թվայնացված սպասարկում: Նորաստեղծ կենտրոնը կգործի «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով՝ բիզնեսին հնարավորություն տալով մեկ վայրում իրականացնել բոլոր անհրաժեշտ մաքսային գործընթացները՝ խնայելով ժամանակ և ռեսուրսներ, սահմանազատման գործընթացները կազմակերպել ավելի արագ: Ծրագրով նախատեսվում է ներդնել ժամանակակից մաքսային և լոգիստիկ լուծումներ, այդ թվում՝ բարձր տեխնոլոգիական X-ray սկանավորման և զննման սարքավորումներ, բեռնատարների սպասարկման և կայանման գոտիներ, վարչական և օժանդակ ենթակառուցվածքներ, ինչպես նաև թվային կառավարման և էներգաարդյունավետ համակարգեր:

Ծրագրի նախագծման և տեխնիկական աշխատանքները վստահվել են միջազգային փորձ ունեցող իտալական IRD Engineering ընկերությանը, իսկ շինարարությունն իրականացվելու է FIDIC Yellow Book միջազգային չափանիշներին համապատասխան: Միաժամանակ, նախագիծը հավակնում է ստանալ LEED կանաչ շինարարության հավաստագիր, որի շրջանակում նախատեսվում են էներգաարդյունավետ և ջրախնայող լուծումներ, կանաչ տարածքների զարգացում, ինչպես նաև վերականգնվող էներգիայի կիրառման հնարավորություններ:

Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2027 թվականին:

ՊԵԿ, 08.05.2026

2025 թվականի դեկտեմբերին ընդունված նոր ռազմավարական օրակարգը համագործակցության ավելի հավակնոտ համատեղ առաջնահերթություններ սահմանեց բոլոր ոլորտներում, հատկապես՝ տնտեսական զարգացման, անվտանգության և դիմակայունության ուղղությամբ:

ԵՄ աջակցությունը Հայաստանին

Եվրոպական միությունը Հայաստանի ամենամեծ դոնորն է և անկախացումից ի վեր զգալի աջակցություն է տրամադրել:

Դիմակայունության և աճի ծրագիր

Հայաստանի համար նախատեսված դիմակայունության և աճի ծրագիրը, որի արժեքը կազմում է 270 միլիոն եվրո 2024-2027 թվականների համար, նպատակ ունի խթանել Հայաստանի սոցիալ-տնտեսական բարեփոխումների օրակարգը և զարգացնել տարածաշրջանային կապակցվածությունը:

Ներդրումներ

Եվրոպական միությունը նաև աջակցում է Հայաստանին ներդրումներով, որոնք ուղղված են հայաստանցիների կյանքի բարելավմանը, տնտեսական աճի խթանմանը և աշխատատեղերի ստեղծմանը:

«Global Gateway» ռազմավարության շրջանակում ԵՄ ներդրումները Հայաստանում նախատեսվում է հասցնել 2.5 միլիարդ եվրոյի՝ նպաստելով ներառական աճին և կապակցվածության զարգացմանը:

Անվտանգություն և պաշտպանություն

2026 թվականի ապրիլի 21-ին ԵՄ Խորհուրդը համաձայնեց Հայաստանում ստեղծել Եվրոպական միության քաղաքացիական գործընկերության առաքելություն (EUPM Armenia)՝ ԵՄ-ի ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակում: Առաքելության նպատակն է՝ իր նախնական երկամյա մանդատի ընթացքում, բարձրացնել Հայաստանի դիմակայունությունը և ճգնաժամերի կառավարման կարողությունները:

Առաքելությունը կաջակցի Հայաստանին բազմաշերտ սպառնալիքներին դիմակայելու գործում, ինչպիսիք են օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիան և միջամտությունը (FIMI), կիբերհարձակումները և ապօրինի ֆինանսական հոսքերը՝ տրամադրելով ռազմավարական խորհրդատվություն, կարողությունների զարգացում և գործառնական աջակցություն: Այն նաև կունենա նախագծային բաժին:

EUPM-ը Հայաստանում ԵՄ-ի երկրորդ, առանձին քաղաքացիական առաքելությունն է: Առաջինը՝ ԵՄ առաքելությունը Հայաստանում (EUMA), ստեղծվել է 2023 թվականին և զբաղվում է տեղում իրավիճակի դիտարկմամբ ու զեկուցմամբ՝ նպաստելով վստահության ձևավորմանը և մարդու անվտանգության ապահովմանը հակամարտությունից տուժած տարածքներում:

Բացի այդ, 2024 թվականից ի վեր Եվրոպական միությունը Եվրոպական խաղաղության հիմնադրամի միջոցով հատկացրել է 30 միլիոն եվրո՝ աջակցելու Հայաստանի զինված ուժերին, զարգացնելու ՀՈՒ լոգիստիկ կարողությունները և նպաստելու ճգնաժամերի ու արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պաշտպանության բարելավմանը:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության հրապարակման մեջ նշվում է, որ տեղի ունեցածը նշանակալի քայլ է հարաբերություններում՝ վերահաստատելով Եվրոպական Միության ամուր հանձնառությունը Հայաստանի ինքնիշխանությանը, դիմադրողականությանը և բարեփոխումների օրակարգին:

Մայիսի 5-6-ին տեղի ունեցավ «Երևանյան երկխոսություն» (Yerevan Dialogue) ֆորումը: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հրապարակել է «Երևանյան երկխոսություն» համաժողովի 6 թեմատիկ ուղղությունները: Դրանք են՝

- «Աշխարհաքաղաքական բաժանումներից անդին»
- «Գլոբալ փոխկապակցվածություն»
- «ԵՄ ընդլայնում և եվրոպական ինտեգրում»
- «Ժողովրդավարական դիմակայունություն, հիբրիդային սպառնալիքներ և ԱԲ»
- «Կանաչ փոխակերպում»
- «Տեխնոլոգիաներ և անվտանգության ճարտարապետություն»: //

2026–ի առաջին եռամսյակում խոշոր հարկատուների ցանկը

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակվել է 2026 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի և վճարների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ցանկի առաջին հորիզոնականը զբաղեցրել է «Մոբայլ սենթր արտը», որը վճարել է 21.37 մլրդ դրամ: 2025–ին այս ընկերությունը երկրորդ հորիզոնականում էր 16.6 մլրդ դրամ վճարած հարկերով:

2–րդ հրիոզանականում «Գազպրոմ Արմենիան» է՝ 19.7 մլրդ դրամ հարկերով, մինչդեռ նախորդ տարի այս ընկերությունը 19.9 մլրդ դրամ հարկերով գլխավորում էր ցուցակը:

3–րդ տեղում է հայտնվել Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը վճարել է 15.5 մլրդ դրամի հարկեր:

4–րդ հորիզոնականում «Գրանդ Տոբակոն» է, որը վճարել է 11.5 մլրդ դրամի հարկ: Այս ընկերությունը 2025–ի 3–րդ հորիզոնականում էր և վճարել էր 12 մլրդ դրամի հարկ:

5–րդ հորիզոնականում հայտնվել է «Սոֆթ Կոնտրակտ» ընկերությունը՝ վճարելով 8 մլրդ դրամի հարկ: Այս ընկերությունը 2025–ին վճարել է 4 մ,լրդ դրամի հարկ և զբաղեցրել 10–րդ հորիզոնականը:

6–րդ հորիզոնականում «Իմբվամ» ընկերությունն է (6.8 մլրդ դրամի հարկ), մինչդեռ 2025–ին այս ընկերությունը 129–րդ հորիզոնականում էր և վճարել էր ընդամենը 604 մլն դրամի հարկ:

7–րդ հորիզոնականում հայտնվել է «Դիջիթեյնը» (6,7 մլրդ դրամի հարկ): 2025–ին նա 19–րդ հորիզոնականում էր 3.2 մլրդ դրամ հարկով:

8–րդ հորիզոնականը զբաղեցրել է «Ֆիլիպ Մորիս Արմենիան», որը վճարել է 6.4 մլրդ դրամի հարկ: 2025–ին այս ընկերությունը 13–րդ հորիզոնականում էր՝ 3.4 մլրդ դրամի հարկով:

9–րդ հորիզոնականը զբաղեցրել է «Սիթի» ընկերությունը, որը վճարել է 6,2 մլրդ դրամի հարկ, մինչդեռ 2025–ին նա 7–րդ հորիզոնականում էր՝ 5.1 մլրդ դրամի վճարած հարկով:

Առաջին 10–յակը եզրափակում է «Թեղուտ» ընկերությունը (6.1 մլրդ դրամի հարկ), որը 2025–ին 36–րդ հորիզոնականում էր՝ 1.9 մլրդ դրամի հարկով:

Հիշեցնենք, որ 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2026 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 459 միլիարդ 270 միլիոն դրամ: Պետական բյուջե է մուտքագրվել նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի 49 միլիարդ 916 միլիոն դրամ. նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է ավելի քան 409 միլիարդ 353 միլիոն դրամ (աճը շուրջ 12 տոկոս):

Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 380 միլիարդ 334 միլիոն դրամ, իսկ Մաքսային մարմին կատարված վճարումների գումարը՝ ավելի քան 78 միլիարդ 935 միլիոն դրամ:

1000 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ ցանկը հասանելի է ՊԵԿ պաշտոնական կայքի «Տեղեկություն հարկ վճարողների վերաբերյալ» բաժնի «Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր» ենթաբաժնում:

27.04.2026Թ.

Վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ ԿԳՄՍ նախարարությունում գողացել են դրամաշնորհային մրցույթի արդյունքները՝ Սյունիքի մշակույթին առնչվող. ի՞նչ անել

Մեր ընթերցողն արդեն տեղյակ է, թե ԿԳՄՍ նախարարությունում 2025 թ. հոկտեմբերի 20-ին ինչպես են աղավաղել–կեղծել դրամաշնորհային մրցույթներից մեկի արդյունքները:

Այդ մասին հանգամանալից ներկայացրել ենք 2026 թ. հունվարի 12-ին՝ այսպիսի վերտառությամբ հրապարակված հոդվածում՝ **«Օ՜, դուք, ոգու խեղճության սերմնացաններ չնչին... Հիմա էլ դրամաշնորհային մրցո՞ւյթն եք այլայլում և կեղծում»:**

Խոսքը 2026 թվականի **««1124. Գրահրատարակչության և գրադարանների» ծրագրի «11003. Ոչ պետական մամուլի հրատարակում» միջոցառման շրջանակում դրամաշնորհ ստացող իրավաբանական անձանց ցանկը հաստատելու մասին»** ԿԳՄՍ նախարարության 2025 թ. հոկտեմբերի 20-ի N 2476–Ա/2 հրամանի մասին է:

Նախարար Ժաննա Անդրեասյանը և նրա ոչ բարով տեղակալ Դանիել Դանիելյանը մինչև հիմա հոդաբաշխ բացատրություն չեն տվել, թե ինչո՞ւ են կեղծել մրցույթի արդյունքները և ինչի՞ հիման վրա են հաստատել 2026–ին դրամաշնորհ ստացող իրավաբանական անձանց ցանկը վերոնշյալ անվանակարգով:

Մենք ստիպված ենք եղել դիմել ՀՀ վարչական դատարան:

Դատարանը հայցադիմումն ընդունել է վարույթ:

Սակայն, Վարչական դատարանի ծանրաբեռնվածության պատճառով, նշված գործով դատական նիստը տեղի կունենա 2026 թ. սեպտեմբերի 8-ին:

Բանն այն է մինչդեռ, որ 2026 թվականին առնչվող դրամաշնորհի վերաբերյալ նախարարի ապօրինի հրամանի հարցը սեպտեմբեր ամսին քննարկելով, անգամ հայցը բավարարելու պարագայում, չենք կարող նախորդ ամիսների բաց թողածը լրացնել և՛ ժամանակի, և՛ ստեղծագործական ու զուտ ֆիզիկական աշխատանքի առումով:

Ուստի և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուշադրությունն ենք հրավիրում խնդրո առարկայի վրա՝ ակնկալելով նրա պաշտոնեական միջամտությունը Ժաննա Անդրեասյանի և Դանիել Դանիելյանի վերոնշյալ ապօրինության հետևանքների վերացման գործում:

Ելնելով դրանից՝ հարկ ենք համարում վերստին հիշել–հիշեցնել տեղի ունեցածի համառոտ բովանդակությունը:

Եվ այսպես՝ ԿԳՄՍ նախարարը 2025 թ. հունիսի 30-ին տարածել է հայտարարություն **««1124. Գրահրատարակչության և գրադարանների» ծրագրի «11003. Ոչ պետական մամուլի հրատարակում» միջոցառման 2026 թ. դրամաշնորհ ստացող իրավաբանական անձանց ցանկի ձևավորման համար անցկացվող մրցույթի մասին»:**

Հայտարարությամբ մրցույթի մեկնարկի օր է սահմանվել 2025 թ. հունիսի 30-ը, հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 2025 թ. հուլիսի 31-ը:

Ըստ մրցութային հայտարարության՝ «Դրամաշնորհ տրվելու է ոչ պետական մամուլի հետևյալ խմբերի նախագծերին՝

ա) Ազգային փոքրամասնությունների տպագիր և էլեկտրոնային պարբերականներ, մշակութային տպագիր և էլեկտրոնային պարբերականներ (այդ թվում՝ մանկապատանեկան),

բ) Գրական տպագիր և էլեկտրոնային պարբերականներ (այդ թվում՝ մանկապատանեկան)»:

«Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսի 2026 թ. բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով՝ լրատվամիջոցի հիմնադիր՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը, նախորդ տարիների օրինակով, մասնակցել է հայտարարված մրցույթին:

Անհրաժեշտ հայտը՝ պահանջվող բոլոր փաստաթղթերով, ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել 2025 թ. հուլիսի 9-ին:

Հուլիսի 12-ին ստացվել է պատասխան առ այն, որ հայտն ընդունվել է:

Մինչև մրցույթի արդյունքների ամփոփումը՝ հավելյալ փաստաթուղթ կամ այլ տեղեկություն չի պահանջվել հայտատուից, ինչը ենթադրել է տալիս, որ մրցութային փաթեթը լիարժեք է եղել ու ամբողջական:

* * *

Մրցույթի արդյունքներին անդրադառնալուց առաջ, համառոտ ներկայացնենք՝ ի՞նչ ասել է «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդես:

Հիմնադրվել է 2021 թվականին:

Ի սկզբանե նպատակ է դրվել լուսաբանել, հանրայնացնել Սյունիքի մարզի հոգևոր–մշակութային իրադարձությունները և արժեքները, վեր հանել և հանրայնացնել երկրամասի հոգևոր–մշակութային ժառանգությունը:

Հինգ տարվա ընթացքում հրատարակվել է 20 համար:

Հանդեսի յուրաքանչյուր համար ունեցել է կոնկրետ թեմատիկ ուղղվածություն:

Լուսաբանված թեմաներն ունեն սկզբնաղբյուրային, հանրագիտարանային նշանակություն, քանզի պատմության մեջ առաջին անգամ են դրանք ի մի բերվել, ընդհանրացվել և ներկայացվել ընթերցողին:

Հանդեսի բնականոն գործունեության համար տարեկան պահանջվող մոտ 10 մլն դրամի մեկ երրորդ մասը (լավագույն դեպքում)՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում, տրամադրել է ԿԳՄՍ նախարարությունը, ծախսերի մնացած մասը հոգացել է խմբագրությունը:

Հանդեսի համարներից յուրաքանչյուրը մեծ արձագանք է գտել ոչ միայն Սյունիքում, այլև հանրապետության հայագիտական շրջանակներում, հատկապես գիտական հանրույթի այն փաղանգում, որտեղ հետաքրքրված են Սյունիքի պատմությամբ և Սյունիքի մշակույթով:

Հանդեսի համարներից յուրաքանչյուրի վերաբերյալ մայրաքաղաքային մամուլում հրապարակվել են դրվատանք պարունակող բազմաթիվ հոդվածներ:

Նույնիսկ այն դեպքերում, երբ մայրաքաղաքային լրատվամիջոցները փորձել են լուսաբանել ԿԳՄՍ նախարարության գործունեությունը ոչ պետական մամուլին տրվող դրամաշնորհների ոլորտում, առաջին հերթին մատնանշել են «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի դրական օրինակը:

Հանդեսի թողարկումներն այնքան բարձրորակ են եղել, որ 2024 թվականին՝ Ակսել Բակունցի 125–ամյակի կապակցությամբ անցկացվող հոբելյանական միջոցառումների շրջանակում նախատեսված թերթային հատուկ համարի հրատարակումը պատվիրել են մեր լրատվամիջոցին:

Մի խոսքով՝ հանդեսն իր տեսակի մեջ եզակի ու բացառիկ է եղել և կմնա այդպիսին՝ անկախ Ժաննայի ու Դանիելի քմահաճույքներից:

Սակայն...

* * *

2025 թ. նոյեմբերի 6-ին ԿԳՄՍ նախարարության ֆեյսբուքյան էջից հայտնի է դարձել, որ 2025 թ. հոկտեմբերի 20-ին նախարար Ժաննա Անդրեասյանը ստորագրել է N 2476-Ա/2 հրամանը՝ **«2026 թվականի «1124. Գրահրատարակչության և գրադարանների» ծրագրի «11003. Ոչ պետական մամուլի հրատարակում» միջոցառման շրջանակում դրամաշնորհ ստացող իրավաբանական անձանց ցանկը հաստատելու մասին»:**

Հրամանին կցվել է հավելված 1-ը՝ 2026-ին դրամաշնորհ ստացող իրավաբանական անձանց ցանկը, որում ընդգրկված չի եղել «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը, որ հիմնադիրն է «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի:

Ընդ որում՝ ցանկում ընդգրկվել են նախորդ տարվա բոլոր կազմակերպությունները՝ բացի «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունից:

Ավելին՝ պաշտոնական որևէ պատճառաբանություն չի ներկայացվել, թե ինչու է «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ–ի նախագիծը մերժվել:

ԿԳՄՍ նախարարությունը չի պատճառաբանել, թե ինչու են բախտորոշ ժամանակներ ապրող Սյունիքի մշակութային բացառիկ և նախադեպը չունեցող հանդեսն անտեսում՝ պետական միջոցները տրամադրելով մայրաքաղաքային ինչ-որ հկ–ների, որոնց հիմնադիրները կամ սեփականատերերը, ինչպես և առաքելությունը պատշաճ կարգով ներկայացված չեն մրցույթի արդյունքներով:

ԿԳՄՍ նախարարի խնդրո առարկա հրամանը Սյունիքում ընկալվել և ընկալվում է որպես խոսքի ազատության դեմ գրոհ, որպես մեր երկրամասի բազմադարյա հոգևոր–մշակութային արժեքների հայտնաբերումը, վերհանումն և հանրայնացումը խափանելուն ակնհայտորեն միտված հակապետական ու հակազգային քայլ:

* * *

Հիմա՝ նախարարի հրամանի իրավական հիմքերի բացակայության մասին...

Նախարար Ժաննա Անդրեասյանն ու նրա ոչ բարով տեղակալ Դանիել Դանիելյանը, ինչպես և տվյալ դրամաշնորհի ստացող իրավաբանական անձանց ցանկի ձևավորման համար ստեղծված Մասնագիտական խորհուրդը խախտել են ԿԳՄՍ նախարարի 2025 թ. հունիսի 23-ի N 1444-Ա/2 հրամանով հաստատված կարգը և սահմանված ձևով չեն ամփոփել մրցույթի արդյունքներն ու 2026 թվականին դրամաշնորհի ստացող իրավաբանական անձանց ցանկը ձևավորել են մրցույթի պայմաններն ու չափորոշիչներն անտեսելով, նաև (ինչպես հետագայում պարզ դարձավ) քմահաճորեն, մրցույթի մասնակիցների միջև խտրություն դնելով, ծանոթ–բարեկամների կամ անձնական շահերի գործոնը գլխավոր չափանիշ դարձնելով:

Նախարարությունը, հակառակ մեր դիմումների, չի ներկայացրել այն չափորոշիչները, որի համաձայն Մասնագիտական խորհրդի անդամները գնահատել են հայտերը, եթե (իհարկե) հայտերի գնահատում է կատարվել, եթե (իհարկե) Մասնագիտական խորհրդի անդամների կարծիքներին նշանակություն տվող է եղել:

Մրցույթի արդյունքներն ամփոփելիս, ըստ նախարարությունից ստացված տեղեկության, նախարարն ու տեղակալ Դանիելը չեն ունեցել Մասնագիտական խորհրդի անդամների լրացրած գնահատման թերթիկները, Մասնագիտական խորհրդի որոշումն ու ցանկը կազմել են սեփական հայեցողությամբ՝ երկուսով:

Եվ գնահատման թերթիկները (հետին թվով) լրացվել են ոչ թե նախագծերի բովանդակությունը հաշվի առնելով, այլ նախարարի ու տեղակալի կողմից մրցույթի արդյունքներն ամփոփելուց ու Մասնագիտական խորհրդին պատվեր իջեցնելուց և սուտ որոշում թղթին հանձնելուց հետո:

Թեև, Կարգի համաձայն, նախարարն իրավունք ուներ (Մասնագիտական խորհրդի որոշումն ստանալուց հետո) հաստատել կամ մերժել խորհրդի որոշումը, բայց...

Նախարարն այդպես էլ չի պարզաբանում՝ արդյո՞ք Մասնագիտական խորհրդին չի բավարարել մեր հայտը, թե՞ ինքն է (մեր մասով) մերժել նախագիծը:

Եվ եթե մերժել են նախագիծը (ինքը կամ Մասնագիտական խորհուրդը), ապա ինչո՞ւ:

Եվ եթե ընդունել են մյուսների նախագծերը, ապա ի՞նչ առավելություն են ունեցել դրանք՝ մեր նախագծի համեմատությամբ:

Ավելին, նախարարությունը չունի կամ թաքցնում է կանոնակարգը, որի համաձայն Մասնագիտական խորհուրդը պետք է գնահատումներ կատարեր և որոշում ընդուներ:

Մշակույթի հետ կապ չունեցող Դանիել Դանիելյանի գլխավորած Մասնագիտական խորհրդին, որի բոլոր անդամները (վեց հոգի) ԿԳՄՍ նախարարության ենթակա աշխատողներ են, չէր էլ կարող լուրջ նշանակություն տալ մշակույթից ի սկզբանե օտարված Ժաննա Անդրեասյանը, ինչի արդյունքում էլ մասնագիտական գնահատական չի տրվել մեր նախագծին:

* * *

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի վերոնշյալ հրամանի օրինականությունը պարզելու համար, ինչպես նշեցինք, դիմել ենք ՀՀ վարչական դատարան, որն էլ հայցադիմումը վարույթ է ընդունել:

Բայց քանի որ դատական նիստը կայանալու է աշնանը, անկախ Դատարանի կողմից ընդունվելիք որոշումից, խնդիրներ են առաջացել «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի գործունեության ճանապարհին:

Ուստի և ստեղծված վիճակի վրա ենք հրավիրում ՀՀ վարչապետի ուշադրությունը՝ ի պաշտոնե այդ կամայականությանն անդրադառնալու ակնկալիքով:

***Հ.Գ.** Սյունիքի մշակութային անցյալն ու ներկան արտացոլող բացառիկ հանդեսին տրվելիք պետական չնչին միջոցը Ժաննա Անդրեասյանը (առանց հիմնավորումների) գրոյացնում է, բայց իր քրոջ տնօրինած ՍՊԸ–ին տրամադրում է 76 մլն դրամ՝ մեկ անձից գնումներ կատարելու համար:*

Կամ՝ ԿԳՄՍ նախարարը 10 դրամաշնորհ է շռայլում իշխանական պատգամավորի ամուսնու ղեկավարած հիմնադրամին՝ 204 մլն դրամի չափով:

Իսկ Սյունիքի մշակութային հանդեսին 1-ից 3 մլն դրամ տրամադրելը... բացառում են՝ չնշելով գոնե մեկ պատճառ:

Ինչպե՞ս հասկանալ:

Պարոն վարչապետ, իսկապե՞ս այդ ամենը կատարվում է առանց Ձեզ տեղյակ պահելու կամ առանց Ձեր կարգադրության:

Կամ՝ մի՞թե այսպես ենք մեր պետական կամ արժեքային վարքագիծը մոտեցնում Եվրոպական ստանդարտներին, ինչի մասին լսում էինք երկու օր շարունակ...

06.05.2026 Թ.

«Բակունցյան Կյորես». Գորիսում կայացավ հանրապետական նկարչական սիմպոզիում

2026 թ. ապրիլի 29-ից մայիսի 3-ը Գորիսում կայացավ «Բակունցյան Կյորես» հանրապետական նկարչական սիմպոզիումը, որը նախաձեռնել և իրականացրել էր «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամը՝ ՀՀ նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի և Ակսել Բակունցի տուն-թանգարանի հետ համատեղ:

Սա հիմնադրամի առաջին խոշոր նախաձեռնությունն էր, որն իր շուրջը համախմբեց ժամանակակից հայ կերպարվեստի ճանաչված ներկայացուցիչներին՝ միավորելով ստեղծագործական աշխատանքը, մշակութային երկխոսությունն ու Բակունցի ժառանգության նորովի ընկալումը:

Նախաձեռնությունը միաժամանակ միտված է ձևավորելու Գորիսը որպես կենդանի ստեղծագործական միջավայր և հիմք դնելու բակունցյան թեմատիկ կերպարվեստային հավաքածուի ստեղծմանը:

Սիմպոզիումին մասնակցում էին գեղանկարիչներ Արտաշես Աբրահամյանը, Արա Հայթայանը, Վահագն Գալստյանը, Հրաչյա Սաֆարյանը, Վահագն Ջիվանյանը, Սրապիոն Դանիելյանը, Կարեն Բարսեղյանը՝ ՀՀ նկարիչների միության նախագահ, գեղանկարիչ Սուրեն Սաֆարյանի գլխավորությամբ:

Մի քանի օր շարունակ արվեստագետները ստեղծագործում էին պլեներային միջավայրում՝ Գորիսի և հարակից տարածքների կարևոր վայրերում՝ Հին Գորիսում (Կյորես), Հին Խնձորեսկում, Վերիշենում՝ Պղնձաբերդի տարածքում: Այդ օրերին Կյորեսը նրանց համար դարձավ ոչ միայն բնապատկեր, այլ նաև հիշողության, գրականության և ներքին ապրումների տարածք, որտեղ Բակունցի աշխարհը վերածվում էր գույնի, լույսի և ձևի:

Սիմպոզիումի ընթացքում կազմակերպվեցին նաև մշակութային շրջայցեր, ինչպես նաև այց Ակսել Բակունցի տուն-թանգարան, որտեղ տեղի ունեցավ մշակութային հանդիպում և քննարկում Գորիսի մտավորականների հետ:

Սիմպոզիումն ամփոփվեց Գորիսի «Պասաժ» ռեստորանային և հյուրանոցային համալիրում կայացած ստեղծագործական երեկոյով, որի ընթացքում արվեստագետները կիսվեցին տպավորություններով և անդրադարձան Կյորեսի բնաշխարհի իրենց գեղարվեստական ընկալմանը: Երեկոյի ընթացքում ելույթ ունեցան «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի տնօրեն Թեհմինա Մարությանը, Ակսել Բակունցի տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը, ՀՀ նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ, գեղանկարիչ Արամ Մաշուրյանը՝ ընդգծելով նման նախաձեռնությունների կարևորությունը՝ Բակունցի ժառանգության պահպանման, հանրահռչակման և ժամանակակից մշակութային կյանքում նրա ներկայությունը կենդանի պահելու տեսանկյունից:

Հիմնադրամի տնօրեն Թեհմինա Մարությանի կողմից մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր: Հանդիսավոր կերպով շնորհակալագիր հանձնվեց նաև Գորիսի «Պասաժ» ռեստորանային և հյուրանոցային համալիրի տնօրենությանը՝ ի դեմս Շահեն Օհանյանի, սիմպոզիումին ցուցաբերած հովանավորության և մասնակիցների ջերմ հյուրընկալությունն ապահովելու համար: Երեկոյի ընթացքում «Պասաժ» համալիրին հանձնվեց նաև սիմպոզիումի շրջանակում ստեղծված գեղանկարչական աշխատանքներից մեկը՝ որպես երախտագիտության և համագործակցության խորհրդանիշ: ՀՀ նկարիչների միության նախագահ Սուրեն Սաֆարյանը նույնպես հանդես եկավ շնորհակալական խոսքով և նվերներ հանձնեց հիմնադրամին՝ բարձր գնահատելով նախաձեռնության գաղափարական նշանակությունն ու կազմակերպչական մակարդակը:

Սիմպոզիումի կարևոր պայմաններից էր, որ մասնակից արվեստագետներից յուրաքանչյուրը մեկական ստեղծագործություն նվիրի հիմնադրամին՝ ձևավորելով բակունցյան թեմատիկ կերպարվեստային հավաքածուի հիմքը: Այդ համատեքստում արվեստագետները սիմպոզիումի ընթացքում ստեղծած իրենց աշխատանքներից մեկը նվիրեցին հիմնադրամին՝ ընդգծելով նախաձեռնության գաղափարական նշանակությունը և շարունակականությունը:

Սիմպոզիումի ընթացքում ստեղծված աշխատանքները կներկայացվեն ցուցադրությամբ՝ 2026 թ. հունիսի 13-ին՝ Ակսել Բակունցի ծննդյան օրը, նրա տուն-թանգարանում, ինչը կդառնա նախաձեռնության կարևոր շարունակությունն ու հանրային ներկայացման փուլը:

Սիմպոզիումի իրականացման գործում առանցքային դեր է ունեցել Գորիսի «Պասաժ» ռեստորանային և հյուրանոցային համալիրը, որն ապահովել է մասնակիցների գիշերակացն ու հյուրընկալությունը: Միաժամանակ «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամը խորին երախտագիտություն է հայտնում բոլոր այն անհատներին և աջակիցներին, որոնց մասնակցությամբ հնարավոր դարձավ այս նախաձեռնության իրականացումը: Մասնավորապես՝ գորիսեցի գործարար Վաչագան Հովհաննիսյանին, գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանին, Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան Միքայել Մաշուրյանին, Գորիսի «Խորեայի ձոր» ռեստորանային համալիրի տնօրենությանը՝ ցուցաբերած աջակցության և համագործակցության համար: Հիմնադրամը գործում է նվիրյալների շնորհիվ՝ այն մարդկանց, ովքեր գիտակցում են, որ Ակսել Բակունցը մեր մեծագույն արժեքներից է և նրա անունն ու ժառանգությունը պարտավոր ենք պահպանել և փոխանցել:

«Բակունցյան Կյորես» սիմպոզիումը դարձավ ոչ միայն ստեղծագործական հանդիպում, այլև մի կարևոր քայլ՝ Բակունցի աշխարհի նորովի ընթերցման և ժամանակակից արվեստի հետ նրա կապի ձևավորման ճանապարհին՝ հաստատելով, որ գրականությունն և կերպարվեստը կարող են հանդիպել նույն տարածքում՝ ստեղծելով նոր որակ և նոր մշակութային շերտ:

«ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ»
ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Կամերային երաժշտության միջազգային դպրոց» ծրագիրը՝ Կապանում

Դասական երաժշտությունը կարոտած կապանցի հանդիսականն այն վայելելու պատեհ առիթ ունեցավ մայիսի 2-ին:

Կապանի արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճում կամերային համերգ էր, որը նախապատմություն ունի: Փետրվարին «Պրիմավերա ֆաունդեյշն» բարեգործական հիմնադրամի և արվեստի պետական քոլեջի միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Ծրագիրն իրականացնում էր Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստի պատմության դոկտոր և իսպանական երաժշտության մագիստրոս, մանկավարժ և կուրատոր Իրինա Կրասոտինան: Ծրագրին մասնակցեց ութ երիտասարդ երաժիշտ-կատարող, ովքեր ապրիլի 28-ից մայիսի 2-ը արվեստի քոլեջում կատարելագործեցին իրենց վարպետությունը՝ կամերային երաժշտության միջազգային դպրոցի շրջանակում:

Իսկ համերգային ծրագիրը ներառում էր արևմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ և Կոմիտաս: Համերգի սկզբում հանդես եկան Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի դասատուներ Մերի Պետրոսյանը (դաշնամուր) և Լիա Գրիգորյանը (ֆլեյտա), ովքեր հնչեցրին Գաետանո Դոնիցետիի «Սոնատ ֆլեյտայի և դաշնամուրի համար դո մինոր» ստեղծագործությունը: Այնուհետև բեմահարթակում Կապանի արվեստի պետական քոլեջի ուսանողներ Մելանյա Պողոսյանը (դաշնամուր) և ջութակահարուհի Հովեր Մարդիրոսյանն էին, ովքեր կատարեցին Մոցարտի ստեղծագործությունը: Հաջորդիվ ևս Մոցարտ էր. «Սոնատ ջութակի դաշնամուրի համար թիվ 19 մի-բեմոլ մաժոր» ստեղծագործությունը հնչեց արվեստի պետական քոլեջի ուսանողներ Յուրի Չարգարյանի (դաշնամուր) և Շահանե Գասպարյանի (ջութակ) կատարմամբ:

Դասական երաժշտության երեկոն անմասն չէր նաև Բեթհովենից, կոմպոզիտորի «Սոնատ ջութակի և դաշնամուրի համար թիվ 6 լյա մաժոր» (ստեղծագործություն 30, թիվ 1, 1-ին մաս) գործը հնչեցրին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ Ռուզաննա Խասապետյանը (դաշնամուր) և կոնսերվատորիայի ուսանողուհի Ալեքսանդրա Հայրապետյանը (ջութակ):

Համերգային ծրագրի հատուկ հյուրը վիրտուոզ դաշնակահար Ռուբեն Կոզինն էր, ով կատարեց Շուբերտ-Լիստի «Անտառի արքան» և «Գրետխենը ճախարակի մոտ» ստեղծագործությունները: Իսկ որպես բիս՝ ևս երկու գործ կատարեց՝ Ֆերենց Լիստի «Վայրի որսը» և Կոմիտաս-Անդրեասյանի «Ծիրանի ծառը»:

Համերգի ավարտին արվեստի քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը երախտագիտություն հայտնեց «Պրիմավերա Ֆաունդեյշն» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Ելենա Յակովլևային և Իրինա Կրասոտինային ու շնորհակալագրեր հանձնեց նրանց՝ «Կամերային երաժշտության միջազգային դպրոց» ծրագիրը արվեստի քոլեջում իրականացնելու համար: Նա նաև համոզմունք հայտնեց, որ հաջորդ անգամ կամերային երաժշտության միջազգային դպրոցը կընդլայնի աշխարհագրությունը, որին կմասնակցեն Սյունիքի մարզի այլ կրթօջախների ներկայացուցիչներ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Տոնակատարություն Կապանում ԻԻՀ հյուպատոսարանում

Իրանի Իսլամական Հանրապետության Կապանի գլխավոր հյուպատոսության տարածքն ապրիլի 25-ին մարդաշատ էր:

Իրանական մշակութային փառատոնի շրջանակում այս անգամ ներկայացվեց երկրի հյուսիսում գտնվող Գիլան նահանգը, մի տարածաշրջան, որ հայտնի է իր անտառներով, Կասպից ծովի ափամերձ տարածքներով, ինչպես նաև յուրահատուկ խոհանոցով ու ժողովրդական արվեստով: Գիլանը համարվում է Իրանի ամենագեղատեսիլ վայրերից մեկը, որտեղ բնությունն ու մշակույթը ներդաշնակորեն միահյուսված են՝ ստեղծելով ինքնատիպ ու գրավիչ միջավայր զբոսաշրջիկների համար:

Տաղավարներում այդ նահանգի ձեռներեցները ներկայացնում էին իրենց արտադրանքը, անուշահամ սննդի տաղավարները գրավում էին գնորդներին:

Աշխույժ մթնոլորտն ամբողջացնում էին Գիլան նահանգից ժամանած երաժիշտների քառյակի հնչեցրած ժողովրդական երգերն ու մեղեդիները:

Ժամը 18-ին արդեն ընդունելություն էր հյուպատոսարանում, նաև լուսանկարների ցուցահանդես էր կազմակերպվել՝ նվիրված Նովրուզին՝ իրանական նոր տարվան: Ազգային այդ տոնը սովորաբար նշվում է մարտի 21-ին, որ մարմնավորում է կյանքի վերածնունդը, բնության զարթոնքը, նորի սկիզբը: Սակայն Ամերիկայի Միացյալ Նահանգների սանձազերծած պատերազմը ստվերեց հինավուրց տոնի մթնոլորտը: Այդ պատճառով միջոցառման անցկացումն ուշացավ և կազմակերպվեց «Նոր տարի. հույսի և հաստատակամության դրսևորում» անվամբ, որպես վկայություն այն բանի, որ նույնիսկ ամենաբարդ ժամանակներում կյանքը շարունակվում է, և մարդը շարունակում է հավատալ, ստեղծել ու առաջ շարժվել: Պատերազմը նաև բացահայտեց իրանական ժողովրդի անկոտրում ոգին, Իրանի ժողովրդի միասնական ներկայությունը պետության կողքին: Մի հանգամանք, որ բացակայում է շատ ազգերի պարագայում:

Հանդիսությանը մասնակցում էին մարզկենտրոնի հասարակայնության տարբեր խավերի ներկայացուցիչներ, Սյունյաց թեմի հոգևոր դասի ներկայացուցիչներ, Կապանում բացվելիք Ռուսաստանի Դաշնության հյուպատոսարանի առաջատար խմբի անդամներ, այլք:

Իրենց ելույթներում տեր Խաչատուր քահանա Հայրապետյանը և Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսարանի գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինը դատապարտեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների ագրեսիան Իրանի խաղաղ ժողովրդի հանդեպ՝ ընդգծելով, որ ոչ մի ոտնձգություն ծնկի չի բերի Իրանի աննկուն ժողովրդին:

Ելույթներն ընդմիջվում էին Գիլան նահանգից ժամանած երաժշտախմբի հնչեցրած երգերով ու ազգային մեղեդիներով:

Ցուցադրվեցին դրվագներ պատերազմական Իրանի կյանքն արտացոլող տեսաֆիլմերից:

Տոնավաճառ-ցուցահանդեսը շարունակվեց նաև հաջորդ օրը՝ ապրիլի 26-ին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Արցախցիները դիմում են ՄԻԵԴ՝ սեփականության կորստի և վերադարձի իրավունքի խախտման հարցերով

2024 թ. հոկտեմբերին հայաստանյան մի շարք իրավապաշտպաններ հիմնադրել են «Արցախի միջազգային իրավական նախաձեռնություն»-ը, որի նպատակն է միջազգային իրավունքի լեզվով պատմել արցախցիների կորուստների և խախտված իրավունքների մասին: Ստեղծումից ի վեր «Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն»-ը գործընկերների հետ համագործակցությամբ, իրականացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված լայնածավալ իրավական աշխատանք՝ հիմնական նպատակ ունենալով միջազգային իրավական գործիքների կիրառմամբ արձանագրել և բարձրաձայնել այն խախտումները, որոնց բախվել են արցախցիները 2020թ. 44-օրյա պատերազմի և 2023 թ. դեպքերի հետևանքով:

Բռնի տեղահանման հետևանքով հազարավոր մարդիկ զրկվել են իրենց հիմնարար իրավունքների իրացման հնարավորությունից, խախտվել է արցախցիների՝ իրենց հայրենիքում ապրելու, այդ թվում՝ իրենց սեփականությունը տնօրինելու իրավունքը, որն ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածում: Տեղահանված արցախցիների՝ տարիների ընթացքում կառուցած կամ ձեռք բերած անշարժ գույքը, հողամասերն ու այլ սեփականություններն անցել են ադրբեջանական վերահսկողության տակ, ինչի հետևանքով նրանք փաստացի զրկվել են դրանք տնօրինելու և դրանցից օգտվելու հնարավորությունից: Այս համատեքստում հատկապես կարևոր է ոչ միայն անհատական իրավունքների պաշտպանությունը, այլև արցախցիների հավաքական վերադարձի իրավունքի ճանաչումն ու իրացման հնարավորության ստեղծումը, քանի որ խոսքը վերաբերում է մի ամբողջ ժողովրդի՝ պատմական հայրենիք վերադառնալու իրավունքին:

Ներկայում տուժած անձինք չունեն ներպետական արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, քանի որ իրավախախտող կողմը հանդիսանում է Ադրբեջանը: Այս պայմաններում միակ արդյունավետ իրավական ճանապարհը մնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործիքակազմի կիրառումը: ՄԻԵԴ դիմելու գործընթացը դիտարկվում է ոչ միայն որպես անհատական արդարության վերականգնման միջոց, այլ նաև որպես կարևոր քայլ՝ միջազգային մակարդակում հավաքական վերադարձի իրավունքի հարցը բարձրացնելու և առաջ տանելու համար:

Գործընթացի շրջանակում Նախաձեռնությունն ընդունում է բռնի տեղահանված արցախցիներին, որոնք ներկայացնում են Արցախում իրենց բնակվելու վայրի, համապատասխան գույքի սեփականության և այլ անհրաժեշտ փաստաթղթեր՝ ՄԻԵԴ անհատական գանգատի պատրաստման համար: Յուրաքանչյուր գանգատ ներառում է նաև անհատական պատմություններ սեփականության կորստի, տեղահանման հանգամանքների, ինչպես նաև Արցախի շրջափակման ընթացքում ստեղծված ծանր ու անմարդկային պայմանների մասին: Պատմությունները ձևավորում են հավաքական տեղահանման և վերադարձի իրավունքի խախտման ամբողջական պատկերը: Հաճախ գանգատներին կից ներկայացվում են նաև սեփականության լուսանկարները և այլ մեդիա նյութեր, որոնք պատկերում են տուժածների անձնական կյանքը մինչև բռնի տեղահանումը: Առաջին գանգատները դատարան են ներկայացվել 2024թ. վերջին, իսկ 2025թ.-ին գործընթացն ավելի լայն ընդգրկում է ստացել: 2026թ ապրիլի դրությամբ ավելի քան 1000 անձի շահերը ներկայացվել են՝ շուրջ 500-ից ավելի գանգատների միջոցով:

Դիմումատուների հիմնական ակնկալիքը արդարության վերականգնումն է՝ դատարանի կողմից խախտումների ճանաչման միջոցով, ինչը կարող է հիմք հանդիսանալ նաև հետագա իրավական գործընթացների համար, ներառյալ՝ վերադարձի իրավունքի իրացման: Բացի գանգատների պատրաստումից և ներկայացումից, թիմը մշտական կապի մեջ է Եվրոպական դատարանի աշխատակազմի հետ: Վերջիններիս առաջարկությունների հիման վրա կատարվում են նաև տեխնիկական փոփոխություններ գանգատների ձևակերպման գործընթացում՝ ապահովելու համար գործերի առավել արդյունավետ և արագ քննությունը:

Նմանատիպ փաստական հանգամանքներով գործեր նախկինում ևս քննվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ մասնավորապես Կիպրոսի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններին առնչվող գործերի շրջանակում, որտեղ դատարանը արձանագրել է սեփականության իրավունքի և այլ կոնվենցիոն իրավունքի խախտումներ՝ ստեղծելով կարևոր նախադեպեր ներկայիս դիմումների համար: Նախաձեռնության թիմը շարունակում է աշխատանքը՝ նպատակ ունենալով աջակցել բոլոր այն տեղահանված անձանց, ովքեր ցանկանում են դիմել ՄԻԵԴ՝ իրենց խախտված իրավունքների ճանաչման համար, միաժամանակ նպաստելով արցախցիների հավաքական վերադարձի իրավունքի միջազգային օրակարգի ձևավորմանը և առաջմղմանը:

21.04.2026 Թ.

Դաստակերտ. անորոշ ճակատագրով քաղաք Սյունիքում

Դաստակերտ քաղաքը գտնվում է Սյունիքի մարզում՝ Երևանից 225 կմ հեռավորության վրա: Սիսիան քաղաքից հեռու է մոտ 15 կմ դեպի հարավ: 1951 թվականին այստեղ բացվել է պղնձամոլիբդենային կոմբինատի հանքավայր, որն աշխատել է մինչև 1973 թվականը: Դրանից հետո քաղաքում բացվել է բժշկական տեխնիկայի գործարան, որը գործել է մինչև 1992 թվականը:

Հայաստանի քաղաքներից ամենաէժան բնակարանները կարելի է գտնել Դաստակերտում: Քաղաքում կա 84 բնակարան, ինչպես նաև 38 առանձնատուն, որոնց մեծ մասը գտնվում են անբարեկարգ վիճակում: Բնակարանների միջին մակերեսը կազմում է 35.5 քառակուսի մետր: Մեկ քառակուսի մետրի միջին պաշտոնական գինը մոտ 8000 դրամ է, իսկ առանձնատների դեպքում՝ 11 600: Ի համեմատություն մայրաքաղաք Երևանի, որտեղ մեկ քառակուսի մետրի արժեքը տատանվում է մոտ 460 000-465 000 դրամի սահմաններում, իսկ կենտրոն վարչական շրջանում՝ մոտ 890 000-900 000 դրամ:

Կարելի է ասել, որ մոտ 600 դոլարով կարելի է բնակարան ձեռք բերել քաղաքում: Սակայն, չնայած այսքան մատչելի գնին, Դաստակերտում անշարժ գույքի վաճառք գրեթե չի իրականացվում: Հիմնական պատճառներն են բնակչության սակավաթիվ լինելը, կոմունալ պայմանների ոչ ամբողջական առկայությունը, աշխատատեղեր չլինելը, որոնք էլ հանգեցրել են տարիների ընթացքում քաղաքի բնակչության կտրուկ նվազման:

Դաստակերտում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է ընդամենը 6 աշակերտ: Քաղաքում կա մշակույթի կենտրոն, որն այսօր չի գործում և գնալով ենթարկվում է քայքայման:

Քաղաքը հարմար է անասնապահության և ագրոտուրիզմի զարգացման համար: Չնայած հիմնականում չկան պատմամշակութային հուշարձաններ (միայն քաղաքից 2 կմ հյուսիս՝ «Վարդապետի քար» կոչված ժայռաբեկորի վրա կա վիմագիր արձանագրություն), բայց այստեղ բնությունը տալիս է բոլոր հնարավոր պայմանները զբոսաշրջիկներին գրավելու համար:

ԱՂՈ ԲԱԴԱԼՅԱՆ
29.04.2026

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք
Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 13.05.2026թ.: